կը հրատարակուի նոյն ձիրքով և նոյն պրոգրամմայով։

ՊՐՕԳՐԱՄ

I. ՏԷՐՈՒԹԵԱՆ ԿԱՐԳԱԴՐՈՒԹԻՒՆՆԵՐ։ II. ԱՌԱՋՆՈՐԴՈՑ ԾՕԹՈՒԱԾՆԵՐ։ III. ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ։ Ընդհանուր յօդուածներ, ֆրմխակցութիւններ, լուրեր։ IV. ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ։ Ընդհանուր յօդուածներ, ֆրմխակցութիւններ, լուրեր։ V. ԹԱՒԻՆ ԼՈՒՐԵՐ։ VI. ՀԵՌԱԳԻՐՆԵՐ։ VII. ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ։ Ֆելիետօն, վէպեր, ինքնագրեր և թարգմանական յօդուածներ դիտութեան ամէն ճիւղերից, ֆրմխակցութիւններ։ VIII. ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ։

ԲԱԺԱՆՈՐԴՈՒԹԻՒՆ։ Տարեկան 10 րուբլ. վեց ամսվայ 6 րուբլ. իւրաքանչիւր ամսվայ 1 րուբլ։
ՀԱՏՈՒԿ համարները 5 կոպէկ։
ՀԱՍՑԷՆ։ *Тифлисъ, редакція «Мшакъ.»*

Խմբագիր—Հրատարակող ԳՐԻԳՈՐ ԱՐԾՐՈՒՆԻ

ԲՈՂԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Հասարակական անտարբերութիւն։—ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ։ Նամակ Երեւանից։ Նամակ Զաքաթալից։ Նամակ Ախալքալաքից։ Նամակ Մոզոլկից։ Նամակ խմբագրին։ Ներքին լուրեր։—ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ։ Թիւրքիա։ Եգիպտոս։ Արտաքին լուրեր։—ԹԱՒԻՆ ԼՈՒՐԵՐ։—ՀԵՌԱԳԻՐՆԵՐ։—ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ։

ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԱՆՏԱՐԲԵՐՈՒԹԻՒՆ

—

Մեր քաղաքային ընտրութիւնների ժամանակ ընտրողները առհասարակ շատ քիչ թիւով են ներկայանում ընտրութիւններին։

Այս տարի, օրինակի համար, առաջին բաժնում, 60 ընտրողներից միայն 35 հոգի էին մասնակցում ձայնատուների ընտրութիւնը, երկրորդ բաժնում, մօտ 250 ընտրողներից միայն 103 ձայն առողներ ներկայ էին գաղտնի ընտրողական ժողովին։

Եթէ ժողովրդը, ընտրողների մեծամասնութիւնը գժգոհ է իր ներկայիդիսութիւնից և նրա գործունէութիւնից քաղաքային գործերի ասպարիզում (և Ճշմարիտն ասած պատճառ էլ ունի, մեր կարծիքով, գժգոհ լինելու), եթէ գժգոհ է քաղաքի դումայից, ուպրավայից, եթէ կարծում է որ մեր քաղաքային գործերի վարողները, առհասարակ, աւելի աչքի առաջ ունեն իրանց անձնական շահը, քան թէ ընդհանրութեան օգուտը,—ի՞նչն է այն ժամանակ բոլոր ընտրողները չեն դալիս, չեն ներկայանում չեն մասնակցում ընտրութիւններին, որպէս զի իրանց ուզած անձերին ընտրեն։

Տրտնջալ գժգոհ լինել, բայց գործ չը կատարել, գործի մէջ չը մտնել, երբ իրաւունք է առած գործ կատարելու,—գա վերին աստիճանի աններելի անտարբերութիւն է հասարակութեան կողմից։

Եթէ հասարակութիւնը համոզված է որ իր քաղաքային գործերը, ոչ էլ որ և է այլ հասարակական հիմնարկութիւն չը պէտք է թողնել մի որ և է նեղ կուսակցութեան, պզտիկանութեամբ, խնամութիւններով, փոխադարձ նիւթական շահերով կապված մարդկանց ձեռքում, այլ պէտք է աշխատել ամենակերպ տալ գործերին ամէն կարգի, ամէն կշռման, ամէն տեսակ տարրերի, ամէն համոզմունքների մարդկանց,—այն ժամանակ ի՞նչն է ինքն հասարակութիւնը չէ աշխատում, չէ ջանում այդ իր նպատակին հասնելու։ Ոյժը նրա ձեռքին է, ի՞նչի չէ գործածում այդ ոյժը, ի՞նչի անտարբեր է թո՛ղ գայ, թող մասնակցի ընտրութիւններին, թող հին գործողներին, որոնցից գաղափար ունի գժգոհ լինելու, այլ և չընտրի, այլ ընտրի նորերին, իր ուզած մարդկանց։

Իսկ եթէ այդ չէ անում հասարակութիւնը, ինքն անտարբեր է մնում դէպի քաղաքային, հասարակական գործերը,—թող այնուհետև ապարդիւն պատասխանատուութիւն չը յայտնի, եթէ ապագայում գործերը վատ կերթան։

Գ. Ա.

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՆԱՄԱԿ ԵՐԵՒԱՆԻՑ

—

Նոյեմբերի 11-ին

Խորհրդով ենք տալիս «Մշակի» ընթերցողներին ձեռք բերել «Գանձի» 27 №-ը, ուր կը տեսնեն.—1) Վեհափառ կաթողիկոսի յաւելի հիւանդութեան մասին բժիշկների կայացրած արձանագրութեան պատճէնը, 2) 41 անձերի ստորագրութիւն նոյն վաւերացրած մի արձանագրութիւն, որով և բնում է պարզ թէ ս. Մանկունաց ուղարկած իրեզէնները ինչո՞ւ կալանաւորեցին Արևանում և թէ՝ 3) ինչպէս առանց կարևոր քննութեան կ. Պօլիս դնացին շատ թղթեր, որոնց քննութիւնից ո՞ւ պիտէ ինչեր պիտի յայտնվէին։

Մի և նոյն համարումն է տպված և ս. բժիշկ Տէր-Գրիգորեանի մի յօդուածը, իբր պատասխան իմ այն յօդուածին՝ որ տպված է «Մշակի» 198 համարում։ Հետաքրքիր է այդ յօդուածը, որովհետև այդ տեղից երևում է թէ նախ՝—Վեհափառ Հայրապետի հիւանդութիւնը ինչ աստիճանի է հասած եղել, երբ մտածել են ս. բժշկապետ Գալբէկին խորհրդի հրաւիրելու. երկրորդ՝ թէ ինչպէս ս. բժ. Տէր-Գրիգորեանն էլ՝ Նորայրի հաղորդած լուրերից առաջ ևս, միաք է ունեցել իւլևաէնեան Նախանձելի գրութիւնը նիւթական մասի վերաբերութեամբ, ցանկացաւ օգնութեան ձեռք կարկառել ներկայ ուսումնական տարուց օժանդակութիւն առալով տարեկան 50 ր.։ Գոհելի է պարոնի արարքը, մանաւանդ, որ այդ օժանդակութիւնը անելու է նա, քանի իրեր կենդանի է, իսկ իրանից յետոյ՝ պարտաւորեցնում է իր ժառանգներին կամ խնամակալին անել մի և նոյնը, քանի որ գոյութիւն կունենան նրա անշարժ կալուածները։ Այս իրաւութիւնը անխոտոր միաքու համար, պարոնը բարեհաճեց ստորագրութիւն տալ հոգարարձութեանը քաղաքիս դիպուտատների և այլոց ներկայութեամբ։ Տեսնելով այս բարի գործը, հրատարակապէս յայտնում ենք վերոյիշեալ պարոնին մեր ջերմ և անկեղծ շնորհակալութիւնը։

Ցնծագնում եմ նոյնպէս եղբարց Արտէմ և Գրիգոր Ցարութիւնեանցներին իրանց խոստումները, պարոններից առաջինը խոստացաւ. նուիրել ուսումնարանին մի խանութ, որ կարօտ է փոքր ինչ նորոգութեան, բայց նորոգով ապահովութիւն կարելի է համարել ուսումնարանի համար, իսկ երկրորդը, լինելով քաղաքիս դիպուտատ, խոստացաւ նուիրել 100 ր. այդ պաշտօնից առացիք։ Յոյս ունեմ, որ վերոյիշեալ պարոնայք չեն ուշանի իրանց խոստումները, մանաւանդ որ ունին բաւական մեծ կարողութիւն, և նրանց համար այդպիսի նուէրներ, կարելի է ասել, մի չնչին բան է, իսկ ուսումնարանին կարող են պատճառել օգտակարութիւն։

Պատահմամբ գտանվելով Զաքաթալայի մէջ սպասեցի ս. Յովհաննէս Նազարեանը՝ այցելից մեր ուսումնարանը և տեսնելով այնտեղ կենդանի պատահմանները, վարձատրից նոցա ընծայելով 20 օրինակ «Երրորդ տպիր» առնուով գրքոյկը, որը պէտք է բաժանել տաղտկալի աշակերտներին յանվարին և կամ քննութիւնից յետոյ։ Յայտնում ենք մեր շնորհակալութիւնը վերոյիշեալ պարոնին։

Դանիէլ Տէր-Զաքարեանց

ՆԱՄԱԿ ԱԽԱԼՔԱԼԱՔԻՑ

—

Նոյեմբերի 11-ին

Ձը նայելով որ մեր թղթակցութիւններից շատերը ուսումնարանաց վրնաղը, նրանցում տեղի ունեցած երևոյթներն են նկարագրում, և այդ պատճառով միակողմանի են, բայց դարձ այն օգտակար ունենն, որ հայ ուսումնարաններն գործով հետաքրքրվող անձինք, յաճախ գրուածց մէջ տեսնում են գաւառական հայ ուսումնարանների զրութիւնների պատկերը։ Թէ մեր հայերը որքան են գնահատում գրան՝ ապացոյց են բազմաթիւ թղթակցութիւնները ուսումնարանաց մասին։

Իւրաքանչիւր հայ անհատ իր հասկացողութեան համեմատ գիտէ, որ հայ ուսումնարանը հասարակական հիմնարկութիւն է, որ իւրաքանչիւր մարդ կարող է նրա վրա խօսել, վիճել և դատել։

Դա ի հարկէ մի գնդեցիկ գրաւական է ուսումնարանների յառաջդիմութեանը։ Իւրաքանչիւր ուսուցիչ գիտէ, որ իր գործունէութեան վրա հսկում են հարիւրաւոր աչքեր, գիտէ որ հարցաքննութեան միջոցին մի ամբողջ հասարակութեան դատարանի քննադատութեանն է ենթարկվելու իր պարապմանց արդիւնքը։

Կարծեմ բաւական չափեր կան որ ուսուցիչը քնելու չէ։

Այդ իրողութիւնը իր ակնյայտնի օգուտ հետ ունի իր թերութիւնները, որ ծագում են ժողովրդի տգիտութիւնից։

Մեր ժողովուրդը թէև ուսումնարանաց վրա իր ունեցած իրաւունքների մասին լաւ տեղեկութիւն-

Fonds A.R.A.M

Fonds A.R.A.M

Հետևյալը 23-ին ինքն իր կյանքին ձեռք տվավ Լիվերպուլում ապրող անգլիացի հայտնի ճարտարապետ Ա. Լիվերպուլ։

Հետևյալը 31-ին

— ՄԱՀՎԱՆ ԱՄՍՈՑ

***

Ամերիկայի Միացյալ Նահանգների Ֆիլադելֆիա քաղաքում 10 տարի առաջ հիմնված Ամերիկյան Ազգային Ընկերությունը (Compagnie Nationale Américaine) ունի 600 բ. օդաչելիք նավ, որոնցից 5 հատ արդեն ի գործ է դրված։ Ընկերությունը 100 տարի ժամկետով պայմանագիր է կնքել Ամերիկայի կառավարության հետ, որի համաձայն նա պարտավորվում է ամեն տարի 100-ական նավ շինել և ամեն 10 տարին մեկ անգամ նորոգել։ Ընկերությունը 40 միլիոն դոլար (մոտ 100 միլիոն ռուբլի) կապիտալ ունի։ Ընկերության նավերը կարող են 120 կիլոմետր արագությամբ գնալ։ Նավերից մեկը, որ 8 հոգի կարող է տանել, 6000 տարի է ծառայելու համար։ Ընկերությունը ամեն տարի 150-ը նավ է շինելու, որոնցից 100-ը պիտի ուղարկվի Եվրոպա։ Ընկերության գործակատարները Եվրոպայում արդեն սկսել են գործել։ Ընկերությունը 609 տարի է ծառայելու համար։ Ընկերության նավերը կարող են 120 կիլոմետր արագությամբ գնալ։ Նավերից մեկը, որ 8 հոգի կարող է տանել, 6000 տարի է ծառայելու համար։ Ընկերությունը 40-ը միլիոն դոլար (մոտ 100 միլիոն ռուբլի) կապիտալ ունի

իրեր, որոնք Մանկունու սեփականութիւն, իհարկէ, չեն կարող համարվել: Ահա ինչ է ասում լրագիրը: «Այդ պահարանների մէջ իրերը մեծապին հանդերձեղէնների կտորներ էին, կրծատարի հարսնեվիք, արծաթեղէն, ոսկեղէն զարդեր, զրպիր, ասեղնագործ սեղանի սփռոցներ, որոնք կարող էին լինել սեփականութիւն ամեն մի հարուստ հողևորականի, կաթոդիկոսից սկսած: Բոլոր հատուածակութիւնը վկայեց միաձայն թէ վճռորամ եպիս. Վենիամինը ծանր զրպիրները իւնկատի առնելով, պատասխանեց նրան՝ ոչ մէկ բան չը շարժել վենդատնից, իսկ երկրորդ՝ եթէ կամենում էր իր սեփականութիւնը այժմէն իսկ անպատճառ ուղարկել Կ. Պոլիս, պէտք է անէր այդ դիատութեան Սինոդի, զրաւոր վկայականով առաջնորդած: Արկղների մէջ երևեցան նաև վեհ. Հայրապետի դիմատառն գործերը, պաշտօնական անձանց դրութիւններ, նամակներ, պ. Ամատունուց ուղարկված տոկոսաթղթեր կուսակների հաշիւներ, վանքական զանազան թղթեր, ինչպէս հանդուցեալ Գաբրիէլ Արքազովիկու ձեռագիր աշխատութիւններից պատմութիւն Գէորգեան ճեմարանի, Հոգեբանութիւն, նամատակս և այլ հեղինակների մի քանի անտիպ դրուածներ: Այդ բոլորը վճռորամ եպիսկոպոս Մանկունու սեփականութիւնը չը լինելը, բացի անձնական նամակներից, որոնք խառն էին միւս թղթերի հետ, բոլոր հանդիսականք առանց բացառութեան վկայեցին:»

Կիրակի, նոյեմբերի 14-ին Աւծրունու թատրոնում հայ դերասանական խումբը տուեց առաջին ներկայացումն է ժամանակած գներով: Գները էժանացնելու և այդպիսով թատրոնը ամբողջ ժամչելի գարձնելու միտքը կատարելապէս աջողվեցաւ, որովհետև թատրոնը գրեթէ լիքն էր: Էժանացրած տոմսակները գրեթէ բոլորը ծախված էին: Մենք խորհուրդ կը տայինք դերասանական խմբին, եթէ միջոց կայ, ապրիլի էժանացնել գները: Կիրակի օրվայ ներկայացման գներով ամբողջ եկամուտը 350 րուբլուց աւելի է, եթէ 50 րուբլու ևս պակասացնէին գները, գործը աւելի աջող կարող է գնալ:

Բժշկապետ, պրոֆէսոր Շլեմանից խնդրում է մեզ յայտնել, որ նա «Новое» հիւանդոցից անցաւ ուրիշ բնակարան, այն է Գալովինսկի պրոսպեկտի վրա, Շեհովի առան, այն բնակարանը, որտեղ դեռևղված է պ. Երմակովի փոտոգրաֆիան: Բժշկապետը չարունակում է առաջվայ պէս ընդունել հիւանդներին ամեն օր, առաւօտեան 9 ժամից մինչև $11^1/_2$ ժամն:

ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ԹՒՐՔԻԱ

Կ. Պոլսի «Հայրենիք» լրագրի մէջ կարդում ենք հետևեալ եղեռնագործութեան մասին, որ կատարվեցաւ Մուշի մէջ:

«Վանէն ուսափացի մը կը հեռագրէ տեղիս անգլիներէն լրագրին, թէ Մէհմէտ Ալի անուն հռչակաւոր աւազակապետին եղբայրը ուզեր է բաղէշի կառավարիչը սպանել, սակայն ձերբակալվելով բանտարկվեր է: Մէհմէտ Ալի իր եղբայրը ազատելու համար իր խումբով Մուշի բանտին վրա յարձակեր, սակայն պահապանք ժամանակին իմանալով, աւազակը վաներ են, բանտարկեալ եղբայրը բանտին մէջ սպանվեր է: Մէհմէտ Ալի իր վրէժը լուծելու համար Մուշի շրջակայները գանվող երեք հայ գիւղերու վրա յարձակեր և գանձնք կողոպտելով գիւղացիները սպաներ, շատ մը կիներ և կոյսեր լկեր և փախեր է: Զը մոռնանք ըսելու թէ ժիշեալ Մէհմէտ Ալին եղբօր դիակը դուրս հանելու համար երկրորդ անգամ Մուշի բանտին վրա յարձակեր, դուրս հաներ և բանտապանները ալ ձերբակալելով քթերնին և ականջնին կտրեր է:»

ԵԳԻՊՏՈՍ

Արաբի-փաշա իր բանտից կայսրկի մէջ գրեց հետևեալ նամակը «Times» լրագրին եգիպտական ապստամբութեան մասին:

«Պարան. «Ջեմայիլ» լրագրի № 1105-ի մէջ «եգիպտական ապստամբների կալանաւորուեան» վերնագրով մի յօդուած կարդացի որի մէջ ասված էր, թէ ապստամբներ էին օֆիցերները, բէդուինների շէյխեր, կադիներ, պատգամաւորներ, ուլեմներ, մուդիրներ, աստիճանաւորներ, թարգմաններ, վաճառականներ և գործակատարներ: Պատք բռնված են և բանտարկված: Հարցնում եմ ապստամբների բոլոր առաջնորդներից, եթէ պիւնարներն են ապստամբներ, ուրեմն ինչէ բանտարկվեցան և անպատճառ այդքան շատ անաւանիներ, ուլեմներ, կագիներ և այլն: Եւ քանի որ ամբողջ ազգութիւնը և ազգաբնակութեան բոլոր դասակարգերը ձգտում էին հասնել միայն մի նպատակի, այն է պաշտպանել և ապատել իրանց հայրենիքը, ուրեմն այդ մարդկանց ի՞նչէ են անուանում ապստամբներ: Ճշմարիտն ասած, կատարեալ բռնութիւն է, որ այդ մարդկանց հետ վարվում են ինչպէս ապստամբների հետ: Պատերազմը սկսվեցաւ մարդկային և Աստուածային օրէնքների հակառակ և հանդիսաւոր հրամանի համեմատ, որ կազմվեցաւ մինիստրների խորհրդի մէջ խեդիվ և սուլթանի դեսպան Դերվիշ-փաշայի նախագահութեամբ: Երբ զինուորները և բնակիչները Թողին Ալէքսանդրիա, խեդիվը անցաւ այն մարդկանց կողմը, որոնք պատերազմում էին նրա հայրենիքի դէմ, այնինչ այնպէս վարվեցաւ, որ արդելված է բոլոր օրէնքներով: Եգիպտական ամբողջ ժողովուրդը պահանջում էր գահընկէց անել Տէվֆիկ-փաշային, որովհետև նա իր հրամանով խանգարեց Աստուածային և մարդկային ամենաբարձր օրէնքները: Այդ մասին տեղեկութիւն արվեցաւ սուլթանին, որ պահանջում էր շարունակել պատերազմը: Եւ գրանից յետոյ մե՞նք ենք ապստամբները: Ես ասեցի, որ մենք պաշտպանում էինք մեր հայրենիքը Աստուածային և մարդկային օրէնքների համեմատ և պատհակառակն ասողը սուտ է ասում և կրքի և փողի է ծառայում: Կատարեալ համոզմունք, որ խաչեմի ուլեմները և բոլոր երկիրների մահմետականները խոստովանում են, որ մենք չենք գտնա եկել Աստուծոյ դրքի մէջ ցոյց տուած սահմաններից և որ մենք անիծում ենք այն նախագիծը, որին ենթարկվեցանք և որ ընդդէմ է ամեն տեսակ իրաւունքի: Հարցնում ենք ճշմարտասէր մարդկանցից, արդեօք իրաւացի է, որի երկրի զաւակները զուրկ են ամեն տեսակ դիրքից, և նրանց անդերը բռնել են օտարականները նրանց հետ եկած չերքէզների, ալբանցիների և բոլգարացիների հետ, այնպէս որ ամենաստոր պաշտօնն անգամ օտարն ունի և ոչ թէ եգիպտոսի զաւակը: Մինչև եգիպտացիները նոյնքան լաւ չէն, որքան բոլգարները և այլ օտարականները: Այնու ամենայնիւ մենք կը գտնենք այնպիսի մարդասէրներ, որոնք պաշտպանում են իրաւունքը ժամանակակից բռնութեան դէմ, որ անպատում է մարդկութեանը: Ահմէդ-Արաբի եգիպտացի»:

ԱՐՏԱՔԻՆ ԼՈՒՐԵՐ

—Լօնդոնից հեռագրում են նոյեմբերի 6-ին: Հանդիսականների ահագին խմբեր պատրաստվում են ներկայ գտնվել այսօրվայ ալբայական զօրախաղին, այն զօրք, որ մասնակցել է եգիպտական արշաւանքին: Տեսարանը աննախաձաւոր է լինելու: Թագուհին վ[illegible]նձօրից եկաւ Լօնդոն 11 ժամին:

—Լօնդոնից հեռագրում են նոյեմբերի 6-ին: Զօրախաղը դեղեցիկ կերպով կատարվեցաւ: Սեր Ուէլոլէյ, կօննաուտի դուքսը և հնդկական զօրքերը մանաւանդ սիրալիր ընդունելութիւն գտան:

—Ալէքսանդրիայից հեռագրում են նոյեմբերի 5-ին: Աստեղ գտնվեցան Արաբիին գրած սուլթանի երկու նամակները: Առաջին նամակը գրված է չէյխ Մահմէդ Զաֆիրի ձեռքով, որը սուլթանի խորհրդատուն և բարեկամն է, երկրորդը գրված է սուլթանի անձնական ադիւտանտ Ահմէդ-Բաահիր-փաշայի ձեռքով: Մահմէդ-Զաֆիր, յայտնելով սուլթանի յանձնարարութիւնը, ասում է այսպէս. «Խալիֆատի իրաւունքները եգիպտոսի վերաբերութեամբ, չնորհիւ անիծեալ չան—անգլիացիների աջողված ինտրիգներին, վտանգի մէջ են գտնվում, այդ իրաւունքները միայն զօք կարող էք պաշտպանել: Այդ պատճառով սուլթանը յոյս ունի, որ զօք չէք խոյս տայ Ֆրանսիացիներին և անգլիացիներին, մանաւանդ վերջիններին, որ գրաւեն եգիպտոսը ինչպէս Ֆրանսիացիքը գրաւել են Տունիսի վիլայէթը: Թոյլ և կամազուրկ խէդիվ Տէվֆիկի վրա սուլթանը յոյս չունի: Աշխատեցէք ոչնչով պատճառներ չը տալ ազգ օտարազգիների ձեռքը, որոնք մտադիր են յայտնել իրանց պահանջները եգիպտոսի վերաբերութեամբ: Ահմէդ-Բէահիր-փաշան ձեր մասին չատ լաւ բաներ էր ասում սուլթանին: Այս նամակը առանձին քարտուղարի ձեռքով է գրված առանձին կնիքներով նրա համար, որ դուք այդի առաջ ունենաք այս յանձնարարութեան մեծ նշանակութիւնը: Զդոյշ կացէք, որ այդ նամակը չընկնի Իսմայիլի, խալիմի կամ Տէվֆիկի ձեռքը: գրագրութիւնը հատատարիմ մարդկանց ձեռքով ուղարկեցէք, ամեն լաւ է պատահարները մեր ուղարկած մարդկանց ձեռքով ուղարկեցէք»: Թիլիգրամ Մահմէդ-Բաահիրի նամակի մէջ ասված է. «Հնարաւորութիւնների, մանաւանդ անգլիացիների ինտրիգներին, որոնք կաշկանդել են եղիպտական ներկայացուցիչներին: Ձեր բարեկամներից մէկին կայիրէ և Ալէքսանդրիա ուղարկեցէք ներկայացուցիչների կարծիքը իմանալու համար»: Արաբիի գործի վերաբերութեամբ մեղադրական ակտը դեռ ևս չէ վերջացրած և 10,000-ից աւելի թերթերից բաղկացած կը լինի:

—Ալէքսանդրիայից հեռագրում են նոյեմբերի 8-ին: Սուդանի ապստամբութիւնը մեծ չափեր առացաւ: Եգիպտական կառավարութիւնը տասն և մէկ հազար մարդուց բաղկացած զօրաջոկին ուղարկեց ապստամբների դէմ: Եգիպտական զինուորները ապստամբվեցան և հրաժարվում են Սուդան գնալ: Մինիստրութեան դրութիւնը անհատատ է համարվում. ապատում են, որ Նուբար-փաշային կը յանձնվի նոր մինիստրութեան կազմելը:

ԽԱՌՆ ԼՈՒՐԵՐ

Թատրոնական հրդեհների ստատիստիկան: Վերջին տարիների ընթացքում թատրոնական հրդեհների 252 դէպքեր կային: Գտնվում է, որ միջին թուով, թատրոնի գոյութեան չարունակութիւնը 22 տարիներից բարձր չէ լինում: Թատրոնների հրդեհների ընդհանուր թիւից երևում է, որ 5 թատրոններ այրվեցան մինչև բացվելը, 70 —մինչ տարուց յետոյ, 38—տարի տարուց յետոյ, 45—քսան տարուց յետոյ, 27—երեսուն տարուց յետոյ, 12—քառասուն տարուց յետոյ, 20 թատրոններ 50 տարի գոյութիւն ունենալուց յետոյ, 17—վաթսուն տարուց յետոյ, 7 թատրոններ 70 —80 տարուց յետոյ և միայն 8 թատրոններ ծառայեցին ամբողջ դար: Մի քանի թատրոններ երկու անգամ են այրվել (38), 3 անգամ (8), 4 անգամ (4) և, վերջապէս ժողովրդական թատրոնը վաշինգտոնում 5 անգամ այրվեց: Ամենից չատ թատրոնական հրդեհներ Ամերիկայում են պատահել, այն է 176, յետոյ Անգլիայում և Ֆրանսիայում 68 իւրաքանչիւրում, Գերմանիայում—49, Իտալիայում—45, Աւստրիայում—26, Իսպանիայում—24, Սպանիայում և Պօրտուգալիայում—17. Թատրոնական հրդեհների ժամանակ եղած զոհերի քանակութեան մասին գաղափար կազմելու համար, բաւական է հետևեալ թուանշանները առաջ բերել: 1778 թ[illegible]ին Սարագոսում հրդեհի ժամանակ զոհ գնացին 127 մարդիկ, 1794 թ[illegible]ին կոպէ Դիտարիում—1000, 1836 թ[illegible]ին Պետերբուրգում—800, 1846 թ[illegible]ին Կվէբեկում—200, 1847 թ. կարլսրուէում—200, 1876-ին Բրուկլինում—283 և 1877 թ. Մոնպէլիէում—400.

* * *

Օմարու թագաւորը: Արևմտա-Աֆրիկային ափից հաղորդում են Օմարու թագաւորի մահուան մասին: Այդ աֆրիկական միապետը իր մահից յետ 700 կանայք թողեց: Նա հայր էր 95 զաւակների, որոնցից 77-ը կենդանի են մինչև այսօր: Նրա անդրանիկ որդին 400 կին ունի:

ՀԱՄԱԿԻՒ ՀԵՌԱԳԻՐՆԵՐ

ՀԻՒՍԻՍԱՑԻՆ ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹԵՆԻՑ

ՆԵՐՋԻՆՍԿ, 15 նոյեմբերի: Կաբինետական ոսկէ հանքերից ներմագրված է 1883 թ[illegible]ականին հանել 100 պուդ ոսկի: Առաջ հանվում էր 150 պուդ: Այդ պատճառով ցանկալի է համարված ոսկու մասնաւոր արդիւնաբերութիւն կաբինետան հողերի վրա: Եթէ այդ իրագործվի երկիրը կը հարստանայ և այլ ևս անկարելի կը լինի դադարի կերպով այդ հանքերից իւրաքանչիւր տարի մօտ 100 պուդ ոսկէ աւազ ծախել Զինաստանի մէջ: Ցանկալի է նոյնպէս որ մաքրվեն Ամուր, Շելկա և Արգուն գետերի ֆարվատաերները:

ՄՕՍԿՎԱ, 15 նոյեմբերի: Արտիստական ընկերութիւնը ծնունդ է իր 18 ամեայ տարեդարձը:

ՓԱՐԻԶ, 15 նոյեմբերի: Այսուհետ լուր է տացվել, որ Պատասխան համաձայն է եւրոպական կոնֆերենցիա գումարել եգիպտական հարցի վերաբերութեամբ, պահանջելով, որ ճանաչվի Անգլիայի բացառական տիրապետութիւնը եգիպտոսի մէջ:

ԴՈՒԲԼԻՆ, 15 նոյեմբերի: Գաղտնի պօլիցիայի երեք անդամներ դիշերով յարձակման ենթարկվեցան: Նրանցից մէկը սպանված է: Զարազործներից երեքը անցսպաղ բռնվեցան:

Ս. ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, 15 նոյեմբերի: Երէկ կայսրուհու ծննդեան օրը հանդիսաւոր մաղթանք կատարվեցաւ Խաչկիեվսկի մայրեկեղեցու մէջ ներկայութեամբ վարչութեան անդամների, դվարդիայի օֆիցերների և ընտրեալ հասարակութեան: Մաղթանքը կատարում էին Մօսկվայի, Ս. Պետերբուրգի և կիևի արքեպիսկոպոսները: Երեկոյեան շքեղ կերպով լուսաւորված թատրոնների մէջ կրտվեցաւ ժողովրդական հիմներ, որ հատատակութեան պահանջի համեմատ կրկնվեցաւ մի քանի անգամ: Ըստ նոյելով խոնաւ եղանակին, փողոցների վրա մեծ շարժողութիւն կար: Նեվսկի պրոսպեկտի մի մասը գաղի ատաղերի երիս զիծ էր ներկայացնում:

«Новое Время» լրագիրը հաղորդում է, որ Տիվլիսի մէջ հաւաքված կառավարչական ինժեներները երկու նախագիծներ մըշակեցին Տիվլիսի սիրատեսքի (?) բարելաւելու համար: «Голосъ» լրագիրը հաղորդում է, որ Խարկովի լեռնային արդիւնաբերողների ժողովի առանձին մասնաժողովը բացատրեց, որ գանված ադի հանքերը կատարելապէս բաւական են ահագին պահանջը լրացնելու համար: «Новости» լրագիրը հաղորդում է, որ Բաքուի (Կոնի վրա) քաղաքի բնակիչները իւ նշան երախտագիտութեան գէպի եկատերինոսլավի նախկին նահանգապետ Դուբնօվօ, որ այժմ ներքին գործերի մինիստրի օգնական է, հատուցին 7,510 ր. նրա անունով մի աղքատ բուսաւորի ստիպենդիան պահելու համար Մօսկվայի տեխնիկական ուսումնարանի մէջ: Եկատերինօգրի բիսակով միշտաններին թոյլ է տուած այսուհետև անուանվել Բօգիսնովներ:

ՍՕՖԻԱ, 15 նոյեմբերի: Երէկ Ռուսաստանի կայսրուհու ծննդեան օրուն աւելով այստեղի մայր-եկեղեցու մէջ իշխան Ալէքսանդրի և վարչութեան անդամների ներկայութեամբ մաղթանք կատարվեցաւ:

ՀՈՒՄ, 15 նոյեմբերի: Ջորքշաբթի օրը ապատում են այստեղ ռուսաց արտաքին գործերի մինիստր Գիրսին իր ընտանիքով:

Խմբագիր—հրատարակող ԴՐԻԳՈՐ ԱՐՇԱՐՈՒՆԻ

Fonds A.R.A.M

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ

ԹԻՖԼԻՍԻ ՔԱՂԱՔԱՑԻՆ ՎԱՐՉՈՒԹԻՒՆԸ յայտնում է, որ ներկայ նոյեմբերի 20-ին նշանակված է երկրորդ անգամ աճուրդ հոկտեմբերի 28-ին չը կայացած տեղ կապալով տալու համար տուրքերը քաղաքային սպասպանոցի մէջ անասուններ մորթելու համար։ Աճուրդին մասնակցել ցանկացողները կարող են տեսնել պայմանները վարչութեան գրասենեակի մէջ առաւօտեան 9 մինչև 2 ժամը։

1—3

ԱՐՇՐՈՒՆՈՒ ԹԱՏՐՕՆ

ՍՈՎՈՐԱԿԱՆ ԳՆԵՐՈՎ

Հինգշաբթի, նոյեմբերի 18-ին, Հայերէն ներկայացումն

ՅՕԳՈՒՏ Գ. ԱԲԱԼԵԱՆԻ

Առաջին անգամ

ՊԱՏԻՒ ԵՒ ՓՈՂ.

կամ 5 արար. թարգ. Գ. ՉՄՇԿԵԱՆԻ

Դերասանական խումբը պատրաստում է

ՍԻՐՈՅ ՓՈՒՇԿԻՆ ՍԷՐ

Հնդ. ՖՐ. ՇԳԻՒՀԱԴՆԻ

2—3

ՎԱՃԱՌՎՈՒՄ Է ՏՈՒՆ ակիմովակայա փողոցի վրա, պօլիցիական 5 բաժնի մէջ։ Տունը երկու յարկանի է, երկաթ սենեակներով, խոհանոցով և բոլոր գնի մասին տեղում կարող է պայմանաւորուել վօրօնցօվսկայա նաբերեժնայա տուն № 13 տան սիմոնօֆից։

(5) 3—3

Վաճառում է ԵՐԿՈՒ ՅԱՐԿԱՆԻ ՏՈՒՆ № 13, որ նայում է վօրօնցօվսկայա նաբերեժնայա և վօրօնցօվսկայա փողոցների վրա։ Վերևի յարկում կան 8 սենեակներ, խոհանոց, ներքևը 5 սենեակներ, խոհանոց և ծառաների սենեակ։ Գնի մասին հարցնել նոյն տեղը տան սիմոնօֆից։ Նոյն տեղը վաճառում է ԴԱՏԱՐԿ ՏԵՂ։

(5) 3—3

Թեմական վերատեսչի Թոյլատրեալով Հաւատարատում բացվելու է Ս. Գրիգոր Լուսաւորչի եկեղեցու Ս. Հոգեհոգիական անուանով օրիորդական ուսումնարան, որի գանգուած է Ս. Հոգեհոգիական եկեղեցու Հանդէպ տիկին Նազարեանցի տանը (որ առաջ դէպ էր)։ Սրանով հաղարարձութիւնը յայտնում է յարգելի հաւատարկութեանը, որ ուսումնարանի ընդունելութիւնը սկսվել է ներկայ նոյեմբերի 12-ից։ Իսկ հանդիսաւոր բացումը իր ժամանակին կը յայտարարվի լրագրներում։

Հոգաբարձուք. Սարգիս Եզիազարեան, Ազատ Մելիք-Ադվադեանց, Գէորգ Թարխանեանց։

ՔԱՂԱՔԱՑԻՆ ՎԱՐՉՈՒԹԻՒՆԸ յայտնում է, որ կիրակի, նոյեմբերի 21-ին, առաւօտեան 10 ժամին Արծրունու Թատրոնում կը կատարվին երրորդ կարգի ձայնատուների ընտրութիւնները։

1—3

ԹՈՒՄԱՆԱԿԱՆ ԽՆԴԻՐՆԵՐ

Ախատեմատիկան ընթացք

Գրիգորի Վարձելեան

Հայոց միջնակարգ ուսումնարանների համար

Մաս առաջին (ամբողջ Թուեր)

Մամուլի տակից լոյս տեսաւ նոյն խնդիրների երկրորդ մասը (կոտորակ Թուեր և երկրաչափական կանոնները)։

Գինն է 40 կօպ.

Ուսումնարաններին զիջում 20%։

Ցանկում է վ. Շահվերդեանի լրագրական գործակալութեան խանութում։

Օտար տեղերից դիմում են այս հասցէով Тифлисъ, въ Агентство В. Шавердова:

Տրւում է ՎԱՐՁՈՎ մի լոյս սենեակ մեբելով, ջուր-լուսով, սամովարով և ծառայով, ամսական 12 րուբլով։ Կաւկասյան, խորշօվսկայա փողոց, տուն № 9, ներքին յարկում։

ОТДАЕТСЯ одна свѣтлая КОМНАТА съ мебелью, отопленіемъ, самоваромъ и прислугою за 12 р. въ мѣсяцъ. Куки, Исарловская улица, домъ № 9, нижній этажъ.

4—10

ՐԱՖՖԻ

ՈՍԿԻ ԱՓԱԶԱՑ

ԼՈՑՍ ՏԵՍԱԻ

Եւ վաճառվում է Թիֆլիսում կենտրոնական Գրավաճառանոցում

և

Հրատարակչի մօտ.

Գինն է ԳԵՂԵՑԻԿ ԿԱԶՄԱԾ 1 ր. 35 կ.
անկազմ 1 ր։ —

Հրատարակչի հասցէն՝

Тифлисъ. Ованесъ С. Степанянцъ на фабрикѣ Сали-оглы.

5—5

ԼՈՑՍ ՏԵՍԱԻ

„ՀԱՑՈՑ ԼԵԶՈՒԻ ՈՒՍՈՒՑԻՉ"

ԵՐԿՐՈՐԴ ՏԱՐՈՒԱՑ

Դասագիրքը

„Կովկասեան պրակտոսէի" հրատարակութեամբ և Ծախվում է նոյն պրակտոսէում։

Գինը 25 կօպեկ է։

Գումարով առնող և ԿԱՆԽԻԿ վճարողին 20% զիջում կը լինի։

կարելի է դիմել.

ТИФЛИСЪ. Кавказская книжная торговля—З. П. Гукурову.

կամ

ТИФЛИСЪ. на Авлабарѣ. Ованесу Назарянцъ.

Ե. Նազարեանց.

Սպրվեցնում եմ ԿՐԿՆԱԿԻ ԻՏԱԼԱԿԱՆ ՀԱՇԻՍՊԱՀՈՒԹԻՒՆ ՀԱՅՈՑ և ՌՈՒՍԱՑ լեզուներով. պայմանների մասին կարող են դիմել ինձ մօտ ԶՈՒԲԱԼՕՎԻ քարվանսարայ, գաւազանեանցի մագազինում ամեն ժամանակ։

ՍՄԲԱՏ ԳԻՏԱՏԱՐԵԱՆՑ

Վարձով են տրւում ԵՐԵՔ ԽԱՆՈՒԹՆԵՐ մառաններով և առանձին ԳԻՆՈՒ ՄԱՌԱՆ Միխայլօվսկայա փողոցի վրա, տուն № 11։ Գնի մասին տեղեկանալ նոյն տեղը դռնապան Ուշերից։

1—3

Վերջնական ՎԱՃԱՌՈՒՄՆ չափազանց էժան գներով անգլիական սեղանի ԱՄԱՆՆԵՐԻ և ՍԻԳԱՐՆԵՐԻ։ ՄԵԼՄԱՆԻ խանութի մէջ Թիֆլիսում երևանեան հրապարակի վրա № 13, տուն Թումբօվի։

3—3

КАВКАЗСКОЕ ОТДѢЛЕНІЕ ГОЛОСА

ОТКРЫТА ПОДПИСКА НА ГАЗЕТУ

„ГОЛОСЪ"

На 1883 годъ

Подписная цѣна съ пересылкою въ годъ 17 р.

Подписка и объявленія принимаются въ Центральной Книжной торговли въ д. Мириманова.

1—3 (1)

Մէջի փողոց, կաթօլիկական փողոցի անկիւն № 13.

Ամէն տեսակ, քան թէ ուրիշ տեղ Ծախվում են. ՎԻԵՆՆԱՑԻ ՄԵՐՈՒ ամենայն տեսակ, Ֆրանսիական և անգլիական երկաթէ ԿՐԱՎԱՔՆԵՐ 8—30 ր., չամոդաններ 250—25 ր., տակվօրշիններ 1. 30—12 ր., ՍՈՒՆԴՈՒԿՆԵՐ ձանապարհի 6—35 ր., մորթիներ (погребцы) 6—25 ր., ՍԱՄՕՎԱՐՆԵՐ 60 կ.—1.25 ֆունտը., կոխածների պղնձէ ամաններ, գերմանիայի երկաթէ էմալով ամաններ. ՈՒՄԲՎԱԼՆԻԿՆԵՐ մրամօրնի 38 ր.—75 ր., հրացաններ երկու լուլաներ 6—32 ր., ՌԷՎՈԼՎԵՐՆԵՐ ամենայն տեսակ 3. 50—30 ր., պատրոններ. (գուլաններ) բէլգիների, սիգար ռէնգարդի Ֆաբրիկից. պապիրոս և թամբաքու կոշտարովի գիլզէ պապիրոզի. 5,000 ՖՈՒՆՏ ԹԼԻ (չայ) ԿՂ. ՊԱՊՈՎՆԵՐԻ, բիսկվիտ. (սուխար չայու և կաֆէի) էմէնտի. կոֆէ էմէնտի և մխիթարեան. Պետերբուրգում 40—1 ր. 25 կ. հայկլիներ ամենայն տեսակ 28 կ.—240 ր., պրոբկայ գինէվաճառներին, հանքային և գարեջրի (для зельтерскихъ водъ и пива) դուլպուկ (пухъ), պատնոններ սամովարի և չայու, գանակ չանգալ գանագան Ֆաբրիկանների 1 ր. 20 կ.—25 ր. գաժինը. ԴՐՉԱԿՈՄՆԵՐ 1 ր. 80 կ.—5—60 կ. գանակ կիրի 1—60 կ.—12 ր., գանակ հացի 20 կ.—1 ր., հատոր, կոխածների 1—40 մինչև 3—20 կ. պրեբօր. մաս կարելու մաշինայ. Անգլիական ութեաներ, բրիտանակի չայնիկներ, կոֆէնիներ ամենայն տեսակ, չադրայներ կոֆէի համար, ՖԻլտեր—ջուր մաքրելու, կրտսանալ կաթօրկէն 18 կ. վառ Տրանսիայի ժակոյ, թուղթի փողոտի, կանվերաներ, սուրդուչ, մատիա, դրիչ երկաթէ, ԴՐՉԱԿՈՄ, քարեսատատակ, Թանաք, Թանաքամաններ, պրեսպապիեներ, գազաներ սեղանի և չայու Ֆրուժէ, փայրավի և բրիտանակի գուժինը 1—50 կ. մինչև 12 ր., և չայու 45 կ.—5 ր., չուժիչկէք 45 կ.—5 ր., շամպանաներ ամեն տեսակ 25 կ.—12 ր. ՋուԹա, պուլատպշկաներ վարշավու, ՌԵԶԻՆԻ ԿԱԼՕՇՆԵՐ, ամեն տեսակ, դուլաններ կատանց և մարդկերանց 15 կ.—50 կ. ՋուԹա, շապիկներ, մարդկերանց գալուսաիկներ, գոտիներ 35 կ.—4—50 կ., հաս, անձրևի և շոգի. անդրեր շերմայու ապրէլ, գուտապերչաի և փայտէ, չուռկաններ գլխի, շորի, ատպկի, պոլի և կարաի համար. ՀԱԼԱՔԻ ԹԷԼ (бумага) մատկի կօճի և չալէ (гарусъ) ֆելչատկէք մարդկերանց և կանանց, պրօտամաններ, քիսաներ, պապիրոսի ամաններ և մանր գրատաերերենի տպրանքներ, սուգան ամեն տեսակ 3 կ.,—30 կ., կար, հոտավէտ ջրեր, պուդրա, Դէկերների ջրի քացախ, հոտավէտ պարաշոկներ ԿԻՎԵՐԻ ԼԱՔՕՐԱՏՈՐԻՑ. և այլն և այլն և այլն։

Վաճառականներին տուանձին պայմաններով և փիջումով վերոյիշեալ ապրանքներ մեծ քանակութեամբ միշտապէս գտնվում են ՄԻՒԱՑԻՆ ՏԵՐ ՆԻԿՈՂՈՍԵԱՆՑԻ պահեստում. (въ складѣ) միջի փողոցում կաթոլիկաց փողոցի անկիւնում № 13.

Օտարաքաղաքացիք կարող են գիմել Տեառնեալ հասցէով. Тифлисъ Михаилу Н. Теръ-Никогосову.

174—180

Մէջի փողոց, կաթօլիկական փողոցի անկիւն № 13.

ՕԳՈՍՏՈՍ ԱՄՍԻ ՄԷԿԻՑ

ՍԿՍԵՑ ՀՐԱՏԱՐԱԿՎԵԼ ՎԻԵՆՆԱՑՈՒԻ

L'ORIENTAL

ՖՐԱՆՍԵՐԷՆ ԹԵՐԹԸ ԱՄԻՍԸ ԵՐԿՈՒ ԱՆԳԱՄ։

„Ժուրնալ դ'Օրիան" լրագրի հին բաժանորդներին դադարեցրած թերթի տեղ կուղարկվի այդ նոր հրատարակութիւնը։

„L'Oriental" թերթի տարեկան գինը 8 րուբլ է, կէս տարվանը 4 րուբլ։

Գրվել կարելի է „ՄՇԱԿԻ" խմբագրութեան մէջ, կամ ուղղակի վիեննայում գիմելով հետևեալ հասցէով. Vienne (Autriche) M. F. Salles I. Neuer Markt 9.

Дозволено цензурою, Тифлисъ, 16 Ноября 1882 года.

Типогр. Главн. Упр. Главнонач. гражд. час., Лор-Меликъ. ул. каз. д.

Fonds A.R.A.M

№ 214 Նոյեմբերի 18 Ուրբաթ

1882

ՏԱՄՆԱՄԵԿԵՐՈՐԴ ՏԱՐԻ

Նոյեմբերի 18 Ուրբաթ № 214

ՄՇԱԿ

Տարեկան գինը 10 րուբլի, կէս տարւանը 6 րուբլի
Առանձին համարները 5 կոպէկով։

Թիֆլիսում գրւում են միմիայն խմբագրատան մէջ։

Օտարազգացիք գիմում են ուղղակի
Тифлисъ. Редакція «Мшакъ»

Խմբագրատունը բաց է առաւօտեան 10—2 ժամ
(Բացի կիրակի և տօն օրերից)։

Յայտարարութիւնն ընդունւում է ամեն ւրեքում։

Յայտարարութիւնների համար վճարում են
իւրաքանչիւր բառին 2 կոպէկ։

ՔԱՂԱՔԱԿԱՆ ԵՒ ԳՐԱԿԱՆԱԿԱՆ

„ՄՇԱԿ“

ԱՄԵՆՕՐԵԱՅ ԼՐԱԳԻՐ

(ՏԱՍՆ ԵՒ ԵՐԿՐՈՐԴ ՏԱՐԻ)

ԱՌԱՋԻԿԱՑ **1883** ԹԻՒՆ

կը հրատարակւի նոյն գիրքով և նոյն պրօգրամմայով։

ՊՐՕԳՐԱՄ Մ

I. ՏԵՂԻՒԹԵԱՆ ԿԱՐԳԱԴՐՈՒԹԻՒՆՆԵՐ։ II. ԱՌԱՋՆՈՐԴՈՂ ՑՕԴՒԱԾՆԵՐ։ III. ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ։ Ընդհանուր յօդուածներ, ի՛մ՛ակցութիւններ, լուրեր։ IV. ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ։ Ընդհանուր յօդուածներ, ի՛մ՛ակցութիւններ, լուրեր։ V. ԽԱՌՆ ԼՈՒՐԵՐ։ VI. ՀԵՌԱԳԻՐՆԵՐ։ VII. ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ։ Ֆելիետոն, վէպեր, ինքնուրոյն և թարգմանական յօդուածներ գիտութեան ամեն ճիւղերից, ի՛մ՛ակցութիւններ։ VIII. ՑԱՆՑԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ։

ԲԱԺԱՆՈՐԴԱԳԻՆ։ Տարեկան 10 րուբլի, վեց ամսւայ 6 րուբլի, իւրաքանչիւր ամսւայ 1 րուբլի։
ՀԱՏՈՒԿ համարները 5 կոպէկ։
ՀԱՍՑԷՆ։ Тифлисъ, редакція «Мшакъ.»

Խմբագիր—Հրատարակիչ ԴՒԴՈՒՔ ԱՐՇՐՈՒՆԻ

ՐՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ։ Նամակ Արտասխից։ Նամակ խմբագրից։ Ներքին լուրեր։—ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ։ Արտաքին լուրեր։—ԽԱՌՆ ԼՈՒՐԵՐ։—ՀԵՌԱԳԻՐՆԵՐ։—ՑԱՆՑԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ։—ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ։ Գիւնեհանութիւնը Գերմանիայում։ Թատրօնի դործը։

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՆԱՄԱԿ ԱՐԴՈՒԻՆԻՑ

Հոկտեմբերի 20-ին

Վերջապէս Արդուինի հայ հասարակութիւնն ալ յոյս ունի իր սեփական կրթութեան վրայ։

Հոկտեմբերի 10-ին բացվեցաւ Սահակեան ուսումնարանը, որի մասին մի քանի անգամ արդէն յիշել եմ յօդուածներիս մէջ։ Բայց ինչ մնած տարրութիւն կայ առաջին տարիների բացման և այժմեան մէջ։ Այն ժամանակ տիրացուական կորգն էր, որ պիտի չպատնականէր, իսկ այժմ կարգադրեալ մանկավարժականը պիտի մոցնվի։ Այդ բացման օրը, որում ներկայ էր հասարակութիւնը, բաժանեցանք, թէ տեսուչ պ. Կամսարականի և մի ուրիշների կողմից ճառեր խօսվեցան, որոնք մեծ ազդեցութիւն արին հանդիսականաց վրայ։ Բացման հանդիսից յետոյ պ. տեսուչը այդ մասին չնորհաւորութեան հեռագիրներ ուղարկեց կարս Թեմական եպիսկոպոս Աղաւնեան արքեպսին և Երևան Թեմական վիճակաւոր պ. Գաբրիէլեանցին։

Ահա վերջինը իսկոյն չնորհակալութեամբ պատասխանեց, բայց առաջինից պատիւ չունեցանք առանալ...

Նոր ուսումնարանի աշակերտաց ընդունելութեան միջոցը որոշվեցաւ մինչև Նոյեմբեր 15, վասն զի տեղական հասարակութիւնը անընդունակ լինելով այդպիսի կարգին, երկար ժամանակ միջոց հարկ էր թողուլ առաջը, որ չը դրկվի ընդունելութիւնից։ Գ. ազ. ուսուցիչները, որոնց մին 16 տարի և միւսը 13 տարի չարունակ ուսուցչութիւն է արել, իրանց ջանքը չեն խնայում ժողովրդան աչքին ու համակրութիւնը գրաւելու գէպի ուսում և ուսումնարանը։ Մի քանի օրուայ տեսակցութիւնից և ուսումնարանական առարկին ընթացքի փորձերից յայտնվեցաւ արդէն, որ գրանք համապատասխանում են իրանց պաշտօնի նշանակութեան։ Մազմում ենք կատարեալ յաջողութիւն յորդիլի մշակներին։

Անհրաժեշտ է մեզ համար ծանուցանել թէ այդ ուսումնարանի բարեկարգումը մի աւելի ծանրակչիռ գործ ալ պիտի ընծայէ տեղական հասարակութեան։ Ինչպէս յայտնի է կաթոլիկ հայերը իրանց դպրոցներում չարունակում են դեռ հին ձևերն ու եղանակը, որոնց այսչափ ժամանակ գոյութիւնը բոլորովին ապարդիւն հետևութիւն ունեցած լինելը, ժողովուրդն ալ սկսել է զգալ։ Այդ պատճառով երբ կաթոլիկ հայերը տեսան լուսաւորչական հայոց ուսումնարանի բարեկարգումն, ամեն կողմից սկսան կարեւորութիւն տալ դորան և մի քանիներ արդէն իրանց երեխաներին ուղարկած են և չատերի մօտ էլ սկսած է ընդհանրանալ այդ փափագը։ Այս ուրախալի երևոյթից դիւրին է մակաբերել, որ այդ համարեա օտար դաստիարակին պատկանող երեխաները, վարժապետների խոհեմ և արիւն հոգատարութեան ներքև դաստիարակվելով, այդ առթիւ հասարակութեան երկու բաժանումների մէջ անդի ունեցած նախապաշարմունքն ու խարութիւնների բարձման հիմ դրված կը լինի։

Աղէտն իսկ զգացված է այդ պէսքը տեղական ժողովրդեան մէջ, և կաթոլիկ հայերը սկսած են յաճախել լուսաւորչականաց եկեղեցական և դպրոցական հանդէսներին, խօսել, խառնակել և գործել միասին։ Յարութիւնն ինք մաղթում մեր եղբայրներին և յաջողութիւն երկու կողմն գործիչների բարի ցանկութեան։

Ուրախանում ենք բարեկարգված ուսումնարանի հաստատութեան վրայ, սակայն պէտք է մատնել որ նորա անխափան գոյութիւնը պահպանելու համար հարկաւոր է անսպառ աղբիւր կամ միջոց մի միջոց, որ կարող է գոյանալ միայն օտարազգացի ազգի յառաջդիմութեան և լուսաւորութեան ցանկացող հայերի նպաստութեամբ։ Վասն զի չը նայելով, որ ժողովուրդը սկսած է հասկանալ դպրոցին և օտարազգացի հոյ պաշտօնեաներ նոյնպէս և տեղացի բարեխրատներ չքաւոր աշակերտներից որոշեալներ են ընտրել, սակայն դեռ մօտ ապագայի մէջ ուսումնարանի տպահովութիւնը ժողովրդի ուժից բարձր է, մինչև մի յայտնի ժամանակ։ Այս նպատակով պ. տեսուչ, կամսարական, որ իր բոլոր ջանք և աշխատութիւն նուիրած է այս վեհ գործին, նուիրատուութեան աղերսով դիմումներ է ղրկած այլ և այլ քաղաքներում։

Փոյթը պիտի վկայէ թէ մեր ուսումնասէր ազգակիցները սրչափ կարեւորութիւն են տալիս մեզ, նոր պրսված նամանդներին հայերիս կրթութեան գործին։

Առաքել Սարուխանեանց

ՆԱՄԱԿ ԽՄԲԱԳՐԻՆ

—

Թիֆլիս 1 Նոյեմբերի

Մեզ ամենևս յայտնի է, որ Թիֆլիսում հայ դպրոցներից միայն Ներսիսեան դպրոցն է, որ պահում է որդեգիրներ։ Բայց ինչ է որդեգիրների վիճակը։

Չը նայելով այնքան ծախսերին, որ անում է ամէն մեծ քանակութեամբ գիրք է կարդում, բայց այդ կարեւոր երկուսակ և երեքսակ վարձատրում է գիտութեամբ և ուսումնասիրողը գիտութեան սպիր (սպիօլի, սպիրտ) մեծ պարունակութիւն է ցոյց տալիս։ Այդ գիտերը, ի հարկէ, ամեն չեն, որովհետև անասելի նուրբ են և ամենալաւ գիտութ ծաղիկ (բուկետ) ունեն։ Այդպէս ալ հաւաքված ծաղկունները կորցնում են իրանց կանաչ, ակնառանձն գոյնը՝ կիսամեռի գոյն առնելով, իրանք հասկիներն էլ համարեա չորանում և խարչոմում են, տեսքով և ճաշակով կիսատպատառ չամիչի նմանելով։ Բայց որովհետև այդպէս ծաղկի պատուներ հաւաքելը միշտ էլ հնարաւոր չէ գործադրել, քէ աշխատասիրների քանդութեան պատճառով և քէ շատ գիտի կորցնելու համար, ուստի այդ տարիների ծախսերը ծածկելու համար հնանալ տարիներում ընդհանուր այդկերպ են անում։

Այդիների վրա մեծ ազդեցութիւն ունեն հողի պայմանները, կլիմայի ազդեցութիւնները և նոյն իսկ տրիների յատկութիւնը։ Պէտք է յայտնած, որ այդիների համար միշտ էլ լեռան գառիվայրերը չեն ընտրում. երբեմն այդիները անկում են ամեն ցած, պայմաններին ամեն յարմար տեղերում։ Որթերի արդիւնաբերութեան ոյժը համարվում է միայն մինչ 25 տարի, իսկ երբեմն այս և այն բարենպաստ պայմանների տակ այդիները պահում են մինչ 40 տարի, որից յետոյ խփերը կորում են, արմատները դուրս են տալիս, որի համար էլ հողը բրում կակղեցնում են մինչև 3 մէտր խորութեամբ և թողնում են հանգստանալ չորս տարի։ Նոր մաքրած և արդէն հանգստացած գետնի վրա մատների տնկելը բաւական ծանր գործ է և կարողութիւն ու հմտութիւն է պահանջում։ Առաջին և երկրորդ տարիներում թողնում են նորանց աճել բոլորովին ազատ ու այնան կտրում են խուզ ճիւղերը. Բէնի վրա

Fonds A.R.A.M

Fonds A.R.A.M

ՇԱՇԿԱ ՎՈՍՏՈՒՄ

Ե. Ալպոյաճյան

Ամերիկայի Միացյալ Նահանգներում հրատարակվող «Ազգ» լրագրի 1-ին թիվը հասավ մեզ ձեռքը, սակայն ոչ մի տեղ չկարդացինք նրա մասին, թե ինչ ծրագրով է հրատարակվում։ Ուրեմն մենք ինքներս պետք է ծանոթացնենք մեր ընթերցողներին նոր լրագրի հետ։

Նախ և առաջ պետք է ասենք, որ «Ազգ»-ը հրատարակվում է Նյու Յորքում, շաբաթական երեք անգամ, հետևյալ օրերին՝ երեքշաբթի, հինգշաբթի և շաբաթ։ Ամեն մի համարը կազմում է 4 էջ, մեծ ֆորմատով, և բաժանվում է 5 սյունակների։ Տարեկան բաժանորդագինը 5 դոլար է, վեց ամսվա՝ 3 դոլար, երեք ամսվա՝ 2 դոլար։ Առանձին համարի գինը 1 սենտ է։ Հրատարակության հասցեն է՝ 1 Park Place, New York City, U. S. A.

Ինչպես տեսնում ենք «Ազգ»-ի առաջին համարի վերնագրի տակ, նա հրատարակվում է «Ամերիկահայ ընկերության» կողմից։ Ընկերության նպատակն է՝ «Ամերիկահայ գաղութների մեջ ազգային զարգացման և ազգասիրական ոգու տարածման համար»։ Ընկերության կանոնադրությունը մեզ հասել է ձեռագրի ձևով, և մենք կարդացել ենք նրա մի քանի հոդվածները։ Ընկերության անդամները կոչվում են «ակտիվ» և «պասիվ»։ Ակտիվ անդամ կարող է լինել ամեն մի հայ, որ 18 տարեկան է և ավելի։ Պասիվ անդամ կարող է լինել ամեն մի հայ, որ 16 տարեկան է և ավելի։ Ակտիվ անդամները պարտավոր են ամսական 25 սենտ վճարել ընկերության գանձարանին, իսկ պասիվ անդամները՝ 10 սենտ։ Ընկերության կենտրոնական վարչությունը գտնվում է Նյու Յորքում, և նրա անդամները ընտրվում են ամեն տարի մի անգամ, ընդհանուր ժողովում։ Ընկերության ամեն մի անդամ ունի մի ձայն, անկախ նրանից, թե նա քանի բաժնետոմսի տեր է։ Ընկերության ամեն մի անդամ ստանում է մի տետրակ, որի մեջ գրված են ընկերության կանոնադրությունը և ընդհանուր ժողովների որոշումները։

Ընկերության նպատակներից մեկն է՝ «Ամերիկահայ գաղութների մեջ ազգային զարգացման և ազգասիրական ոգու տարածման համար» հրատարակել «Ազգ» լրագիրը։ Ընկերության կանոնադրության մեջ ասված է, որ լրագրի խմբագրությունը պետք է ենթարկվի ընկերության կենտրոնական վարչության հսկողությանը։ Ընկերության կանոնադրության մեջ ասված է նաև, որ լրագրի խմբագրությունը պետք է ենթարկվի ընկերության կենտրոնական վարչության հսկողությանը։ Ընկերության կանոնադրության մեջ ասված է նաև, որ լրագրի խմբագրությունը պետք է ենթարկվի ընկերության կենտրոնական վարչության հսկողությանը։

ծախսը, էջմիածինը առել է 1,000 րուբլ վարձ: Ասում են բժշկապետը յայտնել է որ վնասվածի ծեր բուխկան պատճառով նրան օպէրացիա անել անհնարին է և որ կաթողիկոսի ցաւը անբուժելի է»:

—

ԲԱԳՈՒԻՑ մեզ գրում են: «Արդէն մի երկու շաբաթ է որ այստեղ երևացել են չվեցգլի ասատրանական քարոզիչներ: Որովհետև պարոններդ ռեզական լեզուներ չը գիտեն և խօսում են միայն չվէդերէն լեզուով, այդ պատճառով նրանք որոնում են այստեղ մի խարդման, անգիս ժողովրդի մէջ քարոզելու համար»:

—

Մեր երէկվայ համարում ապեցինք Բէկ-Նազարեանցի պատասխանը բժիշկ Տէր-Գրիգորեանին: Մենք համարձակւում ենք կարծել, որ պ. Բէկ-Նազարեանց չափից դուրս խիստ կերպով է վերաբերւում բժշկին: Ինչ կարող է անել, ինչ կարող էր իրանից յայտնել մի մանուկը բժիշկ, քանի որ Սիմօզ կայ: Իսկ Սիմօզը ոչինչ քայլ չէր անում հասարակութեանը վնասից հիւանդութեան մասին տեղեկացնելու համար և անտարբեր նայում էր Մանկունու բոլոր օրերի վրա:

—

«Русскій Курьеръ» լրագրին Փէնէվից գրում են, որ Փէնէվի բժշկական ֆակուլտէտը այս օրերս Օլգա Դաւթիճնայա ռուս կնոջը բժշկական գիտութեան դոկտորի պատուական աստիճանը շնորհեց: Վերջին երկու տարվայ ընթացքում երկու ռուսներ պատուական քննութիւն տուին և ստանալով բժշկապետութեան դոկտորի կոչումը, մասն չվէդցարական պետական ծառայութիւնն մէջ:

—

Հայերէն գրքեր հրատարակողներից յայտարարութիւններ տպելու ժամանակ, մանաւանդ երբ այդ գրքերը մանկական գրքեր են, կամ վէպեր են, առհասարակ ընթերցանութեան գրքեր են, որոնք իրանց հրատարակչին ոչինչ չան չեն բերում, «Մշակի» խմբագրութիւնը առհասարակ փող չի վերցնում: Հայերիս մէջ միակ գրքեր, որոնք քիչ շատ կարող են տալ հրատարակչին, այդ ձեռնարկներ, պատգրքեր և դուցէ օրացոյցներն են: Դէտ այդ տեսակ գրքերի հրատարակիչներից դուցէ կարելի էր ժամանակ առ ժամանակ փող վերցնել, նրանց յայտարարութիւնը տպելու ժամանակ: Մանաւանդ մենք չենք վեր առնում փող, երբ հրատարակիչը իր գրքի մի օրինակն էլ մեզ նուէր է ուղարկում: Բայց նոյեմբերս սկսած «Մշակի» խմբագրութեան մէջ փող վերցնել պ. Ց. Յովհաննէսեանից իր հրատարակած «Ոսկի Աքաղաղ» գրքի յայտարարութեան համար: Այդ պատճառով խնդրում ենք պարոնին ներկայացնել խմբագրատուն և յետ առնել խմբագրութենից իր յայտարարութեան համար վճարած փողը: Այժմ «Մշակը» արդէն այնքան մեծ եկամուտ ունի յայտարարութիւններից առհասարակ, որ հայոց գրքերի մասին տպվող յայտարարութիւններից փող վերցնելը ամենևին չենք համարում: Բայց և այն ժամանակ, երբ մենք գրեթէ յայտարարութիւններ չունէինք, մենք հայերէն գրքերի հրատարակիչներից փող չէինք վեր առնում նոր լոյս տեսած գրքի մասին յայտարարութիւն տպելու ժամանակ:

—

Այսօր, նոյեմբերի 18-ին հայ դերասանական խումբը Աղծրունու թատրոնում կը ներկայացնէ յոթգլուա պ. Աւալեանի «Պատիւ և փող» կոմեդիա 5 արարուածով. թարգմ. պ. Գ. Զմշկեանի: Տեղերի գները սովորական են: Ինչպէս յայտնի է պ. Աւալեանը առաջնակարգ տեղ է բռնել գերասանական խմբի մէջ հայ ներկայացումների սկսվելուց մինչև այժմ և, բացի գործի աջողութեան համար աշխատելուց, մի և նոյն ժամանակ լաւ դերասան է եղել: Երեխ հասարակութիւնը համակրութեամբ կը վերաբերվի պ. Աւալեանին թէ իբրև լաւ գերասանի և թէ իբրև բեմական գործիչի:

ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ԱՐՏԱՔԻՆ ԼՈՒՐԵՐ

—

—Լրագիրները հեռագրում են նոյեմբերի 7-ին: Ջանախի հարցի վերաբերութեամբ Բ. Պրան և Ֆրանտիայի մէջ եղած բանակցութիւնները ընդհատված են: Սալիսբերը չատ սառն ընդունեց դեսպանական դեսպաններին:

—Կայիրէից հեռագրում են նոյեմբերի 7-ին: Խարտումից ստացած տեղեկութիւնների համեմատ, կրօնական չարժման չափերը Սուդանում վտանգաւոր բնաւորութիւն են ստանում: Սուդանի հետ ծանօթ անձինք հաղորդում են, որ ապստամբութեան առաջնորդը նախկին Մահդի-փաշա, բաւական ընդունակ մարդ է: Վերջինս իրան համար օգնական գտաւ, Ֆանատիկոս-Դերվիշին, որ Քերմայից եկել է Դարֆուր և պատել է Մահդուկան, բարոզելով իրան հետևված կրօնը, ապստամբեցնելով նեգրներին և համոզելով նրանց, որ Մահդին միակ մարդն է, որ արժանի է Մելջին-Ալիֆինկայի, մինչև անգամ ամբողջ Նոբիայի սուլթան լինելու: Արաբի-փաշան, զրաւված լինելով եգիպտական ապստամբութեան կազմակերպութեամբ, չը կարողացաւ զօրքեր ուղարկել Սուդանը ազատելու համար:

—Նոյեմբերի 12-ին կայիրէում, մանմնատականների նոր ապրելակերպ պատճառով, խէդիվը պաշտօնապէս ընդունեց զանազան դասակարգերի պատգամաւորներին, դիպլոմատական անդամներին, պէյերին և եւրոպական գաղթականութեան նշանաւոր ներկայացուցիչներին: Խէդիվը ընդունեց նոյնպէս լորդ Դիւֆերինին և պեներալ Էլիսոնին:

—«Լէվօնեան Լլոյդին» նոյեմբերի 9-ից Կ. Պօլսից գրում են հետևեալը: «Սրուտաղէմում եկեղեցական մեծ երկպառակութիւն ծագեց: Յունական պատրիարքը Կ. Պօլսում և նրա սինոդը չեն կամենում ճանաչել յունաց հոգևորականների ձեռքով արդարեան քաղաքում նոր ընտրուած պատրիարք Իոսիֆ Պէրօղլուին, որովհետև նրա մայրը, իբր թէ, կատարեալ բարոյական կնիք չէր վարում, իսկ նրա ընտրութիւնը եկեղեցական օրէնքների համեմատ չէ կատարվել: Բ. Դուռը, իր կողմից, ներկայ հանգամանքում պաշտպանում է սինոդական պատրիարքին և նրա սինոդին: Այնու ամենայնիւ, նոր պատրիարքը չարունակում է կատարել իր թեմը: Այս օրերս նա պատրաստ էր մասնակցելու Քրիստոսի գերեզմանի եկեղեցում: Ինչպէս լսվում է, Բ. Դուռը վճռել է ուժով զրկել պատրիարքին իր աստիճանից և Երուսաղէմից հեռացնել նրան:

—Վիկտոր Հիւգոն 500 ֆրանկ ուղարկեց Լամբրոզիայում հեղեղից մեռածների օգտին, հետևեալ նամակի հետ. «Թող ընդդիմադրութիւնը բնութեան բռնութեան մարդկային մրցակից այժմ: Թող ամեն տեղ, ուր խորտակում է բնութիւնը, ընդդիմադրութիւնը նրան արգելս մեկ մարդ: Չէզոքացնենք բնութեան ստորագրութիւնները տեղական հեղեղները և այլ չարիքները: Ներքաշենք մարդուց ստացած ուժն ապստամբութեամբ միլիոններ կը կազմին: Ժողովրդական կապիտալը պէտք է դառնայ մարդասիրական մեծ այժ և պէտք է վկայէ բոլոր մարդկանց եղբայրութիւնը»:

ԽԱՌՆ ԼՈՒՐԵՐ

Օ ա տ ր ո ա ի կ տ ա կ: Գէմիշիր կոմսութեան մէջ (Անգլիայում), մի քանի օր առաջ վախճանվեցաւ մեկ հարուստ կին, որը իր կտակի մէջ հետևեալ կարգադրութիւնները արաւ. 150,000 ֆրանկ նա կտակեց Լոնդոնի կենդանիների հովանաւորութեան ընկերութեանը. 50,000 ֆրանկ—անասունների համար ջուր խմելու տեղ շինելու և 25,000 ֆրանկ—շների ապաստարան հիմնելու համար: Այդպիսի առատաձեռնութիւնը դէպի կենդանիները նա բացատրում է նրանով, որ ոչ մի գազանից իր կեանքի ընթացքում երբէք ձեռք չէ կրել, այն ինչ իրան յայտնի մարդկանց իններ տասերորդ մասը չար և անշնորհակալ էին:

* *

Հ ե տ ա ք ր ք ի ր զ օ կ ո ւ մ է ն տ: Կոմս Թուղլֆ Ֆօն-Ջուլց, որ կաթոլիկ դաւանութեան էր պատկանում, 1605 թվին պապիցից կոմսուհի Ագատա Ֆօն-Գանտաի հետ, որ բողոքական էր: Իր նշանադրութեան ժամանակ նա առաց նրան գրաւոր կապակցութիւն հետևեալ բովանդակութեամբ. «Ես, կոմս Բուգոլֆ Ֆօն-Ջուլց, խոստանում եմ իմ կոմսական պատուով կամ, ստանան ինձ տանէն, որ ես թոյլ եմ տալի իմ ապագայ ամուսնուն մնալ իր կրօնի մէջ, կամ, գոնէ, ոչինչ տարբերութիւն չեմ տայ թազնելու նրան իր կրօնը: Ես երկու ստատուածաշունչ ունեմ. եթէ գրանք քիչ կը լինեն կնոջս համար, ես կրկին երկու հատ ևս կը գնեմ: Թող միայն նա կարդայ այդ սուրբ գրքերը ուշադրութեամբ և ջանասիրութեամբ: Մանաւանդ որ ես առնում եմ նրա մարմինը, և ոչ թէ հոգին: Ես հաստատում եմ մեռած իմ կրօնին, որի մէջ կրթվել եմ իմ պատանեկութեան օրերից և պիտեմ, որ իսկական ճանապարհն վրա եմ կանգնած: Եթէ նա չէ կամենում երկինք գնալ, թող դէպի դժոխքն ուղևորվի»:

* *

«Indépendance Belge» լրագիրը հետևեալ մանրամասն տեղեկութիւնները տարօրինակ այն սուտ մարգարէի մասին, որ առաջնորդում է Սուդանի ապստամբական չարժմանը: «Ահա ամսոն և հինգ ամիսներ են արդէն, որ կայիրում սկսեցին պրազվել այդ դպրանի անձնաւորութեամբ, որը, ըստ երևոյթին, օտարոտի աղեցութիւն ունի երկրի հարաւային մասի աղգաբնակութեան վրա: Նրա անունը Ահմէդ-Մօհամէդ է և նա բնակվում է Սալիսակ Նեղոսի կղզիներից մեկի վրա, Աբայի վրա, որ խարտումից 30 մղոն դէպի հարաւ է գտնվում: Թէպէտ նա դէրվիշների ոչ մի աղանդին չէ պատկանում, այնու ամենայնիւ, մանկութեան վարդապետի կեանք է անցկացնում. նա վարում է ազքատ, առանձնացած և ճգնաւորական կեանք, ժամանակ առ ժամանակ միայն դուրս է գալիս իր առանձնութենից և քարոզում է թէ հասել է մահմետականութեան վերածնութեան նոր տարիքին: Բոլոր մահմետական երկիրներում հաւատում են այն մարգարէութեանը, որ նոր տարիքին պէտք է սկսվի Հէջրայի տասն և չորրորդ դարի սկզբից (1300 թուականից), երբ Մօհամէդի աղդարարված «Մահդին» պէտք է յայտնվի և տանի ուղղափառներին վերածնութեան և յաղթութեան ճանապարհի վրա: Ըստ երևոյթին, չէլլա Ահմէդ Մօհամէդ սկզբում իրան կոչված չէր համարում մի որ և է նշանաւոր դերի կատարելու համար, բայց սակաւ առ սակաւ նրա համախոհները համոզեցին նրան, որ նա պէտք է նշանաւոր դեր խաղայ, և որ նա ինքն է Մօհամէդի խոստացված «Մահդին». մինչև մի յայտնի աստիճան, այնու ամենայնիւ, նա համապատասխանում է սրբազան պրոգրամի պայմաններին, որովհետև Մօհամէդ անունն է կրում: Նրա հօր անունն է Աբդալլա, իսկ մօր անունը Ամինէ, իսկ որպէս այն անուններն են, որ ունէին մարգարէի ծնողները: Անցեալ բանտարկի ժամանակ, այսինքն 1881 թվի օգոստոսին, չէլլա Ահմէդը առաջին անգամ իրան «Մահդի» հրատարակեց: Ամբոխները, որոնց նա ամեն տեղերից գրաւում էր, իրանց յարգանքը յոյց տալու համար երեսի վրա ընկնում էին նրա առաջ, բայց միւս կողմից, նրա յաղթական գնացքը երկրի միջով, նրա խօսելու ձևի համարձակութիւնը և նրան վերագրվող հրաշքները իշխանութեան կասկածները յարուցին: Եգիպտական կառավարութիւնը հրամաններ ուղարկեց նահանգապետներին և փոխնահանգապետներին հետամուտ լինել նրան և ցրվել այն խմբերը, որ շրջապատում էին նրան: Մահդիի առաջին ընդդիմադրութիւնը կառավարութեանը յաջողութիւն չունեցաւ: Այդ պատահեցաւ Սէննաարի մօտ, Կապոյտ Նեղոսի վրա: Գառաւի մուդիրը ուղարկեց նրա դէմ մի զօրաբաժին, որ յանձնարարութիւն ունէր ջարդել նրան և նրա բազմաթիւ ամիրասլին: Մահդին, նստած սպիտակ ձիու վրա, բաժանվեցաւ իր ուղեկիցներից և ձայն տուեց թշնամի զինուորներին առելով, որ Ալլահի օգնութեամբ ինքն կարող է նրանց գնդակները անվնաս դարձնել: Այդ խօսքերին զինուորները հրացանի գնդակներով պատասխանեցին և Մահդին առել բարեաց համարեց փախչել: Նրա ամիրասլից 40 մարդիկ ընկան սպանված: Ահմէդը չուառով այդ պարտութեան վրէժը հանեց. յունիսի 10-ին նա Գազիրեան Լճանների մօտ ջարդեց 12,000 մարդուց բաղկացած զօրքը, որից միայն 27 մարդիկ ազատվեցան և որոնք պատմում էին եգիպտական զօրքի ջարդի մանրամասնութիւնները»:

«ՄՇԱԿԻ» ՀԵՌԱԳԻՐՆԵՐ

ՀԻՒՍԻՍԱՑԻՆ ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹԵՆԻՑ

Ս. ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, 16 նոյեմբերի: Նոյեմբերի 22-ին կը քննվի դատաստանական գործը Ս. Պետերբուրգի փոխատու ընկերութեան մէջ կատարված գողութիւնների մասին:

ԽԱՐԿՈՎ, 16 նոյեմբերի: Կալուածական բանկը որոշեց ծախել 93 կալուածներ և 52 առն 1,353,900 ր. արժոյքի համար:

ՕԴԷՍՍԱ, 16 նոյեմբերի: Համալսարանի վարժանված բժիշկ Խմանով կատակեց ֆիզիկո-մաթեմատիկական բաժնին 25,000 ր. գրամ և հոգեր 15,000 ր. արժոյութեամբ:

ԲԵՐԼԻՆ, 16 նոյեմբերի: Լուր է տարածված, թէ բիսմարկ կարծում է, որ եգիպտական հարցը պէտք է լուծվի եւրոպական կոնգրէսի մէջ: Լուրը ֆելդմարշալ Մօլտկէի Ս. Պետերբուրգ ուղեւորվելու մասին գլխաւոր-շտաբի ակադեմիայի յօբելեանին ներկայ գտնվելու համար, չէ հաստատվում:

Կ. ՊՕԼԻՍ, 16 նոյեմբերի: Պաշտօնից հրաժարված Սայիդ-փաշայի տեղ արտաքին գործերի մինիստր նշանակված է Ալբանցի Ահմէտ-փաշա:

ՓԱՐԻԶ, 16 նոյեմբերի: Ֆրանտիական լրագիրները անհանգիստ են ռուսաց արտաքին գործերի մինիստր Գիրսի բերլինի մէջ երկար մնալու պատճառով, եզրակացնելով դրանից, որ Ռուսաստանը և Գերմանիա միանց մօտենում են:

Ս. ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, 16 նոյեմբերի: Ուսանողական անկարգութիւնների պատճառով տեղի համալսարանի մէջ կոմանուաւված են 91 մարդ, նրանցից հոգաբարձուն արձակել է անպայման 46 ուսանողներ, 22 արձակված են, իրաւունք ունենալով նորից համալսարան մանել ղէմնի պայմանով, արձակված են 10 ազատ ունկնդիրներ և 56 հոգի ուղարկվում են իրանց ծնողների մօտ: Դատաստութիւնները շարունակվում են: „Прав. Вѣст.“ լրագիրը հաղորդում է, որ նոյեմբերի 14-ին կայսրուհու ծննդեան օրը հաւաքվեցան գաշինս բարձրագոյն և բարձրաստիճան անձինք և ամիրայի անդամներ: Շատով ակավեցաւ մաղթանք, որի վերջանալուց յետոյ հետևեալ դունդերի հրամանատարները՝ կամալերգարդի, կիրասիրների և Պավլովեան գրագունների, որոնց չէին է կայսրուհին, ներկայացրին նրան շքեղ փունջներ թարմ ծաղիկներից: 250 հոգու համար պատրաստված նախաճաշիկի ժամանակ մեծ իշխան Միխայիլ Նիկոլայեվիչ առաջարկեց կայսրուհու կենացը, որ ներկայ եղողները ոգևորութեամբ ընդունեցին: Ընտանեկան ճաշից յետոյ սար սկավեցաւ, որ շարունակվում էր մինչև 2½ ժամը կէս գիշերվայ: „Страна“ լրագիրը հաղորդում է, որ կապիտալ պատասխանների ենթադրված միութիւնը ակզիպային վարչութիւնների հետ, գժտար իրագործել է համարված: Լրագիրները հաղորդում են, որ ժողովրդական լուսաւորութեան մինիստրութիւնը պատուիրեց գիմնազիաների, և բէալական ուսումնարանների դիրեկտորներին և տեսուչներին ճշդութեամբ կատարել որոշված կանոնները հաստատութիւնների մասին, ասելի յաճախ և մօտ յարաբերութիւններ ունենալ աշակերտների ծնողների հետ, որքան կարելի է զգուշանալ մեղադրութիւններին ժամանակաւորապէս հեռացնելուց և զգոյշ լինել աշակերտների ընդունելութեան, մանաւանդ նրանց մի ուսումնարանից միւս ուսումնարանը անցնելու ժամանակ:

Խմբագիր—հրատարակող ԳՐԻԳՈՐ ԱՐՇԱՐՈՒՆԻ

Fonds A.R.A.M

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ

ԹԷՑ առաջին հունձի այս տարի չափազանց գոյնաւոր և հոտաւէտ։ Այդ թէյից **ԱՆԳԼԻԱԿԱՆ ԽԱՆՈՒԹԻ** մէջ առացված է 50,000 ֆունտ և ծախվում է 25% էժան և աւելի լաւ քան թէ ուրիշ տեղ։ Օրինակ. Լաւ կօնգօ թէյ 1 ր.—1 ր. 20 կօպ., պատուական սանճա թէյ 1 ր. 40 կ., հիանալի մօնիկ թէյ 1 ր. 60 կ. այս թէյ ամեն տեղ ծախվում է 2 ր.—2 ր. 50 կ., գեղեցիկ կաւճասեայ թէյ 1 ր. 80 կ. և ամենալաւ ֆու-չու-ֆաւ թէյ 2 ր. մանրաբար լինում են 500 երկաթէ մաէճակալներ 6 ր.—60 ր., երկաթէ գրիչներ առ բազմ. անդրկովկասի համար, շոկոլադ փրայ, շեվիլլի դանակներ, վերահանդոյզ մակմաստեր մազերի համար, հրացաններ դասի, րեվօլվերներ վերլի, թամբեր բարձերի, կօլմանի նըշըշատայ, ալբոմներ շեյտյի կէս գնով։ **ԱՆԳԼԻԱԿԱՆ ԽԱՆՈՒԹ, ԹԻՖԼԻՍԻ ՄԷՋ ԱՐԾՐՈՒՆՈՒ ԳԱԼԼԵՐԷՅՈՒՄ** № 156, 157, 158, 159 և 100։

79—100

ԾԱԽՎՈՒՄ ԵՆ ՋԻԱՆԵՐ աշխատող, լծվող, պիտանի ֆուրգոններին համար և այլն։ Հասցէն. „Եւրօպա“ հիւրանոց № 22

3—5 (1)

ԱՐԾՐՈՒՆՈՒ ԹԱՏՐՕՆ

ՍՈՎՈՐԱԿԱՆ ԳՆԵՐՈՎ

Հինգշաբթի, Նոյեմբերի 18-ին, Հայերէն ներկայացումն

ՅՕԳՈՒՏՏ Գ. ԱԻԱԼԵԱՆԻ

Առաջին անգամ

ՊԱՏԻՒ ԵԻ ՓՈՂ

կամ. 5 արար. Թարգ. Գ. ՋՄՇԿԵԱՆԻ

Դերասանական խումբը պատրաստում է

ՍԻՐՈՑ ՓՈԽԱՐՔԷՆ ՍԷՐ

Հնգ. ՖՐ. ՇԳԻՒՀԱԳԵՆԻ

3—3

Թեմական վերատեսչի Թոյլատրեամբ Հաւաքարտում բացվեցաւ Ս. Գրիգոր Լուսաւորչի եկեղեցու Ս. Հռիփսիմեան անուանով օրիորդական ուսումնարանը, որը գտնվում է Լիմիաճնեցոց եկեղեցու հանդէպ տիկին Նազարեանցի տանը (որ առաջ դէպ ալ է)։ Սրանով հոգաբարձութիւնը յայտնում է յարգելի հասարակութեանը, որ աշակերտուհիների ընդունելութիւնը սկսվել է ներկայ Նոյեմբերի 12-ից. իսկ հանդիսաւոր բացումը իր ժամանակին կը յայտարարվի լրագրներում։

Հոգաբարձուք. Սարգիս եղիազարեան, Ազատ Մելիք-Ադամեանց, Գէորգ Թարխանեանց։

ԹԻՖԼԻՍԻ ՔԱՂԱՔԱՑԻՆ ՎԱՐՉՈՒԹԻՒՆԸ յայտնում է, որ ներկայ Նոյեմբերի 20-ին նշանակված է երկրորդ անգամ աճուրդ Հոկտեմբերի 28-ին չը կայացածի տեղ, կապալով տալու համար տուրքերը քաղաքային սպանդանոցի մէջ անասուններ մորթելու համար։ Աճուրդին մասնակցել ցանկացողները կարող են տեսնել պայմանները վարչութեան գրասենեակի մէջ առաւօտեան 9 մինչև 2 ժամը։

2—3

Վաճառվ են տրվում ԵՐԵՔ ԽԱՆՈՒԹՆԵՐ մառաններով և առանձին ԳԻՆՈՒ ՄԱՌԱՆ Միխայլօվսկայա փողոցի վրա, տուն № 11։ Դնի մասին տեղեկանալ նոյն տեղը գտնվող Ռ-չեերից։

2—3

ԹՈՒՔԱՆԱԿԱՆ ԽՆԴԻՐՆԵՐ

ախտերատիքական ընթացք

Գրիգորի Վարձելեան

Հայոց միջնակարգ ուսումնարանների համար մանր առաջին (ամբողջ Թուրք)

Մամուլի տակից լոյս տեսաւ նոյն խնդիրների երկրորդ մասը (կոտորակ Թուրք և երրորդական կանոններ)։

Գինն է 40 կօպ.

Ուսումնարաններին զիջումն 20%։

Վաճառվում է Վ. Շահվերդեանի լրագրական գործակալութեան խանութում։

Օտար տեղերից պիտի ուղարկեն այս հասցէով Тифлисъ, въ Агентство В. Шавердова:

Տրվում է ՎԱՐՁՈՎ մի լոյս ՍԵՆԵԱԿ մեբելով, վառելափայտով, սամովարով և ծառայով, ամսական 12 րուբլով։ Կանչիայում, խաչլօվակայա փողոց, տուն № 9, ներքին յարկում։

ОТДАЕТСЯ одна свѣтлая КОМНАТА съ мебелью, отопленіемъ, самоваромъ и прислугою за 12 р. въ мѣсяцъ. Куки, Исарловская улица, домъ № 9, нижній этажъ.

5—10

ԼՈՒՍՍ ՏԵՍԱԻ

„ՀԱՑՈՑ ԼԵԶՈՒԻ ՈՒՍՈՒՑԻՉ“

ԵՐԿՐՈՐԴ ՏԱՐՈՒՆԱՑ

Դասագիրքը

„Ազգական գրախանութի“ հրատարակութեամբ և ծախվում է նոյն գրախանութում։

Գինը 25 կոպեկ է։

Գումարով առնող և կանխիկ վճարողին 20% զիջումն կը լինի։

կարելի է դիմել.

ТИФЛИСЪ. Кавказская книжная торговля—З. П. Грикурову.

կամ

ТИФЛИСЪ. на Авлабарѣ. Ованесу Назаринцъ.

Ց. Նազարեանց.

Ստրմեցնում եմ **ԿՐԿՆԱԿԻ ԻՏԱԼԱԿԱՆ ՀԱՇԻԱՊԱՀՈՒԹԻՒՆ ՀԱՑՈՑ և ՌՈՒՍԱՑ** լեզուներով պայմանների մասին կարող են դիմել ինձ մօտ **ՋՈՒԲԱԼՕՎԻ** քարվանսարայ, Գասպարեանցի մոգազինում ամեն ժամանակ։

ՍՄԲԱՏ ԳԻՏԱՏԱՐԵԱՆՑ

ՊԱՏԿԵՐԱԶԱՐԴ

ՆՈՐ ՕՐԱՑՈՑՑ

1883 թ.

Կը տպուի Մօսկվայում մեծ թերթի վերայ լիտօգրաֆիայով գունաւոր և շրջանակը ազգային հին և նոր յիշատակների և նշանաւոր անձինքների պատկերներով զարդարուած։ Բաժանորդագինն է մի օրինակի համար 1 ռուբլի։ Ցանկացողները կարող են գրուել „Մեզուի“ խմբագրատանը, օտար քաղաքացիք նոյնպէս։

Ցօրինոզ՝ Մ. Ցէր-Մաթէոսեան

Վաճառվ է տրվում ԽԱՆՈՒԹ ՄԱՌԱՆՈՎ Ալափեանցի կարգում, Թումքերի հրապարակի վրա։ Դնի մասին տեղեկանալ ՇԱՀՎԵՐԴԵԱՆԻ գործակալութեան մէջ։

2—5

Վ. ՇԱՀՎԵՐԴԵԱՆԻ ԼՐԱԳՐԱԿԱՆ ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹԵԱՆ ԽԱՆՈՒԹՈՒՄ.

(Գօլօվինսկի պրօսպեկտ, Ալեքսանդրեան պարտէզի մօտ).

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՎՈՒՄ ԵՆ Թէ տեղական, Թէ ռուսատառի և Թէ արտասահմանեան բոլոր պարբերական հրատարակութիւններին 1883 տարուայ համար։

7—10

Նաւթի ՑԱԿԱՌՆԵՐԻ համար տախտակներ (**КЛЕПКИ ДЛЯ ФОТОГЕННЫХЪ БОЧЕКЪ**) ցանկացողներին Թէ պատրաստի և Թէ ուզած չափին պատրաստելու համար խնդրում եմ դիմել Բախում, ԱՐՇԱԿ ՅԱՍՈՒՐԵԱՆՑԻՆ։

Въ БАТУМЪ, Аршаку ЦАТУРОВУ.

9—20

Մ ի ջ ի փ ո ղ ո ց, կ ա թ օ լ ի չ ե ս կ ա յ ա փ ո ղ ո ց ի ա ն կ ի ւ ն № 13.

Աւելի էժան, քան թէ ուրիշ տեղ ծախվում են. վիէննայի մեծն, ամենայն տեսակ, ֆրանսիական և անգլիական երկաթէ կրակարաններ 8—30 ր., չամոպաններ 250—25 ր., սակվօյաժներ 1. 30—12 ր., առանդուկներ ճաշնապարհի 6—35 ր., մարաններ (погребцы) 6—25 ր., սամօվարներ 60 կ.—1.25 ֆունտը., կոխանների պղնձէ ամաններ, գերմանիայի երկաթէ էմալով ամաններ. ուտի վալներ մրամօրներ 38 ր.—75 ր., հրացաններ երկու լուլաների 6—32 ր., աէվոլվէրներ ամենայն տեսակ 3. 50—30 ր., պատրոններ. (գուլաններ) րիվոլվերի, որիգոր Ռէնգարդի ֆաբրիկից. պապիրոս և թամբաքու կաշնարօվի գիլդի պատիրօզի. 5,000 ՖՈՒՆՏ ԹԷՑ (չայ) ԵՂ. ՊԱՊՈՎՆԵՐԻ, բիսկվիտ. (սուխար չայու և կաֆէի) էմէմի. կօֆէ էմէմի և մէխէլսօնի. Պետերբուրգում 40—1 ր. 25 կ. հայկլիներ ամենայն տեսակ 28 կ.—240 ր., պրօրկայ գինեվաճառների, հանքային և գարեջրի (для зельтерскихъ водъ и пива) գալեռուկ (пухъ), պադուշաներ սամովարի և չայու, դանակ չանդալ գանագան ֆաբրիկաների 1 ր. 20 կ.—25 ր. գուժինը. գլչակոճներ 1 ր. 80 կ.—5—60 կ. դանակ ջիրի 1—60 կ.—12 ր., գանակ հացի 20 կ.—1 ր., հատալ, կուխանների 1—40 մինչև 3—20 կ. պրէբօր. մես կարելու մաշինայ. Անգլիական ութմաներ, բրիտանկի չայնիկներ, կաֆենիկներ ամենայն տեսակ, Ջաղացներ կաֆէի համար, ֆիլտեր—ջուր մաքրելու, կրեմամալ կարօրկէն 18 կ., վաքս ֆրանսիայի ժակոյ, Թուղթ փշոտի, կանվերտաներ, սուրդուչ, մետաղ, դրիչ երկաթէ, զրչակոճ, քարեւտախտակ, Թանաք, Թանաքամաններ, պրեսպապիներ, գդալներ սէդանի և չայու ֆրուժէ, վարշավի և բրիտանկի գուժինը 1—50 կ. մինչև 12 ր., և չայու 45 կ. 5 ր., չուռիչկէք 45 կ.—5 ր., շամպանաներ ամեն տեսակ 25 կ.—12 ր. ջուխտ, պոլսապշկաններ վարշավու, ՒՆՋԻՆԻ ԿԱԼՕՇՆԵՐ, ամեն տեսակ, գուլբաններ կանաչ և մարդկերանց 15 կ.—50 կ. ջուխտ, չապիկներ, մարդկերանց գալոշաներ, գոնաչկներ 35 կ.—4—50 կ., հատ, անձրևի և շաբ. սանդրեր շրմայու ոսկով, գուտապերչովի և փայտէ, շտուկաներ գլխի, շորի, սապոնի, պոլի և կարտի համար. չուլքի բէկ (бумага) մետոկի կօշի և շալէ (гарусъ) ֆէչաակէք մարդկերանց և կանանց, պորտմանեներ, քիսաներ, պապիրոսի ամաններ և մանր գալանտերեյնի սպրանքներ, սուպն ամեն տեսակ 3 կ.—30 կ., կատր, հատակէտ ջրեր, պուդրա, գլխկրիի ջրի քացախ, հոտաւէտ պարաշոկներ ԿԻԼԵՐԻ ԼԱՔՕՐԱՏՈՐԻՑ. և այլն և այլն և այլն։

Վաճառականներին առանձին պայմաններով և զիջումով վերոյիշեալ ապրանքներ մեծ քանակութեամբ միշտպէս գտնվում են ՄԻՔՈՒՑԻՆ, ՏԻՐ ՆԻԿՈՂՈՍԵԱՆՑԻ պահեստում (въ складѣ) միջի փողոցում կամոյիկայ փողոցի անկիւնում № 13.

Օտարաբաղաքացիք կարող են դիմել հետևեալ հասցէով. Тифлисъ Михаилу Н. Теръ-Никогосову.

175—180

Մ ի ջ ի փ ո ղ ո ց, կ ա թ օ լ ի չ ե ս կ ա յ ա փ ո ղ ո ց ի ա ն կ ի ւ ն № 13.

ՕԳՈՍՏՈՍ ԱՄՍԻ ՄԻԿԻՑ

ՍԿՍԵՑ ՀՐԱՏԱՐԱԿՎԵԼ ՎԻԷՆՆԱՑՈՒՄ

L'ORIENTAL

ՖՐԱՆՍԵՐԷՆ ԹԵՐԹԸ, ԱՄԻՍԸ ԵՐԿՈՒ ԱՆԳԱՄ։

„Journal d'Orient“ լրագրի հին բաժանորդներին դարձեալ թերթի տեղ կուղարկվի այդ նոր հրատարակութիւնը։

„L'Oriental“ թերթի տարեկան գինը 8 րուբլ է, կէս տարվանը 4 րուբլ։

Գրվել կարելի է „ՄՇԱԿԻ“ խմբագրութեան մէջ, կամ ուղղակի վիէննայում դիմելով հետևեալ հասարակ հասցէով. Vienne (Autriche) M. F. Salles I. Neuer Markt 9.

Дозволено цензурою, Тифлисъ, 17 Ноября 1882 года

Типогр. Главн. Упр. Главнонач. гражд. час., Лор-Меликъ. ул. каз. д.

Fonds A.R.A.M

№ 215 Նոյեմբերի 19 Ուրբաթ

1882

ՏԱՍՆԱՄԵԿԵՐՈՐԴ ՏԱՐԻ

Նոյեմբերի 19 Ուրբաթ № 215

Տարեկան գինը 10 րուբլի կէս տարեկանը 6 րուբլի
Առանձին համարները 5 կոպէկով։

Թիֆլիսում գրվում են միմիայն խմբագրատան մէջ։

Յաղորդագրութիւնը դիմում են ուղղակի
Тифлисъ. Редакція «Мшакъ»

ՄՇԱԿ

Խմբագրատունը բաց է առաւօտեան 10—2 ժամ
(Բացի կիրակի և տօն օրերից)։

Յայտարարութիւն ընդունվում է ամեն լեզուով։

Յայտարարութիւնների համար վճարում են
իւրաքանչիւր բառին 2 կոպէկ։

ՔԱՂԱՔԱԿԱՆ ԵՒ ԳՐԱԿԱՆԱԿԱՆ „ՄՇԱԿ“

ԱՄԵՆՕՐԵԱՅ ԼՐԱԳԻՐ

(ՏԱՍՆ ԵՒ ԵՐԿՐՈՐԴ ՏԱՐԻ)

ԱՌԱՋԻԿԱՑ **1883** ԹԻՒՆ

կը հրատարակվի նոյն դիրքով և նոյն պրօգրամայով.

ՊՐՕԳՐԱՄԱ

I. ՏԻՊՈՒԹԵԱՆ ԿԱՐԳԱԴՐՈՒԹԻՒՆՆԵՐ։ II. ԱՌԱՋՆՈՐԴՈՂ ՅՕԴՈՒՒԱԾՆԵՐ։ III. ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ։ Ընդհանուր յօդուածներ, թղթակցութիւններ, լուրեր։ IV. ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ։ Ընդհանուր յօդուածներ, թղթակցութիւններ, լուրեր։ V. ԽԱՌՆ ԼՈՒՐԵՐ։ VI. ՀԵՌԱԳԻՐՆԵՐ։ VII. ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ։ Գեղիտօն, վէպեր, ինքնատիպ և թարգմանական յօդուածներ դիտութեան ամեն ճիւղերից, թղթակցութիւններ։ VIII. ՑԱՆՑԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ։

ԲԱԺԱՆՈՐԴԱԳԻՆ։ Տարեկան 10 րուբլի, վեց ամսվայ 6 րուբլի, իւրաքանչիւր ամսվայ 1 րուբլի։
ՀԱՏՈՒԿ համարները 5 կոպէկի։
ՀԱՍՑԷ՝ն։ *Тифлисъ, редакція «Мшакъ.»*

Խմբագիրը—Հրատարակող ԳՐԻԳՈՐ ԱՐՇՐՈՒՆԻ

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Մոսկվայի կուսակցութեան հայեացքը։—ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ։ Նամակ Յարիկենից։ Նամակ խմբագրին։ Ներքին լուրեր։—ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ։ Արտաքին լուրեր։—ԽԱՌՆ ԼՈՒՐԵՐ։—ՀԵՌԱԳԻՐՆԵՐ։—ՑԱՆՑԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ։—ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ։ Մի պատկեր Գալիբալդիի կեանքից։

ՄՕՍԿՎԱՑԻ ԿՈՒՍԱԿՑՈՒԹԵԱՆ ՀԱՑԵԱՑՔԸ

—

Ռուսաստանում վաղուց է արդէն կաղմվել է կատկովի պրօպագանդայի ներքոյ ծուխեան տակ թիթու շօվինիստների մի կուսակցութիւն, որ ունենալով իր կենտրոնը Մօսկվայում, անուանվում է Մօսկվայի կուսակցութիւն։

Վաղուց է արդէն յայտնի են պ. կատկովի անհնայ արշաւանքները ամեն մի ռուսահպատակի դէմ, որ պատկանում է ուրիշ կրօնին և ուրիշ ազգութեան, քան թէ կայսրութեան տիրապետող կրօնն ու ազգութիւնը։ Ամեն մի անհատական արտայայտութիւն մի որ և է ռուսահպատակ այլակրօն կամ այլացեղ մարդու մէջ, մանաւանդ պետութեան ամրմանպրութիւն գործերում, խստութեամբ հալածվում էր միշտ պ. կատկովից։

Մինչև սրսի ծագելը նա տանից դուրս էր գալի և կերակրում էր սագերին, որոնք սեանելով նրան ուրախ ուրախ ըղավում էին։ Մինչև ժամի 8-ը խօսելով տանեցիների հետ, Գարիբալդին հրացանը ուսին գնում էր սարը։ Շատ ժամանակ նա վերադառնում էր սպանված կայնահաւով (бекасъ) և շատ ժամանակ էլ դատարկ։ Յերեկին սեղանի վրա գնում էին ճաշը—սեղանը ոչ մի ժամանակ չէր ծածկվում սիւռպով, իսկ անձեռոցիկների տեղ նրան ծառայում էին լրագրական թերթերը։ Գարիբալդին պատուիրել էր, որ ամեն ժամանակ, երբ նա ճաշին չը հասնի կամ ուշանայ, նրան չը սպասեն։ Եթէ նա նկատում էր, որ նրան սպասել են ճաշելու համար, նա այդ օրը իրան շատ վատ էր զգում և տխուր էր լինում, իսկ հակառակ դէպքում, երբ նա նկատէր, որ առանց սպասելու են ճաշել, նա շատ ուրախ էր երևում։ Ճաշը բաղկանում էր սպասից և մի բաժին մսային կերակրից, պատառում էին ժամանակ առ ժամանակ և պատուղներ։ Գարիբալդին սիրում էր պատուղները, բայց պրանցից ամենի շատ սիրում էր խաղողը։ Եթէ պատուղների մէջ պատահէր գեղեցիկ տանձը, կամ ոսկեգոյն դեղձը, Գարիբալդին, որին միայն էր պատկանում վերցնելը, թողնում էր անօթի վրա առանց ձեռք տալու, և որովհետև միւսներն ևս հետևում էին նրա օրինակին, այդ պատճառով նոյն պատուղները երևում էին և հետևևալ օրվայ սեղանի վրա։ Ճաշի ժամանակ Գարիբալդին հանաքներ էր անում. դինի չէր խմում, և եթէ ժամանակ առ ժամանակ խմում էր մի փոքրիկ բաժակ, դառնում էր ուրախ և շատախօս։ Նա իր խօսակիցների հետ խօսում էր ազատ և պատմում էր իր խառնաչփոթ կեանքի գործերից կատարած առասպելներ։ Նա շատ ճշմարիտ և հետաքրքիր պատմող էր։

Գիտցուց յետ Գարիբալդին Տօսկանայի սիզդարի կէսը կտրելով ծխում էր, նստած իր տանից փոխ հեռու. նրանից յետոյ նա գնում էր պարտէզ, տրնկում էր ծառեր կամ կտրատմէր չորացածները և յետոյ գնում էր իր սենեակը և պարապում էր ընթերցանութեամբ։ Ու այս կերպով նա անց էր կացնում իր ժամանակը մինչև երեկոյ։

Երիտասարդները, որոնք բնակվում էին Գարիբալդիի մօտ նորա պէս մի և նոյն տեսակ կեանք չէին վարում։ Նորա չէին բանականանում լևանների վրա բարձրանալով և այծերի որսորդութեամբ։ Երբ գիներալը չէր հրամայում նոցա սինել կապրերայում, նստում էին նաւակ և գնում էին Մադդալենա կղզին։

Ընէին միայն երկու նաւակներ, մինը փոքր առնլի չարմար լճերի վրա մանգալու բան թէ ծովերի, և սրան այնպէս էին չինել, որ ուսերի վրա տեղափոխում էին մի տեղից միւս տեղ։ Այս այն նաւակն էր, որին անուանում էին կացահարիկ, որով Գարիբալդին խօսելով իտալացիների հակումութեանը, գնաց Կապրերայից և դուրս եկաւ ցամաք։

Մի անգամ երիտասարդ գարիբալդիականը, որին անուանում էին Բազէ, լաւ տնտղելով այս նաւակը, արձակեց սրան և իջնելով ծովը ուղղվեց Մադդալենա կղզին։ Ճաշը վերջանում էր, բայց նա դեռ չէր վերադարձել։ Գարիբալդին իր Տօսկանան սիզարայի կէսը ծխել վերջացրել էր, բայց երիտասարդը չը կար ու չը կար։

—Այս ուր գնաց նա, ասեց գիներալը, շատ կարելի է Մադդալենա կղզումն է և վախենալով եղանակի վատութիւնից մնաց այնտեղ։

Ուղիղ որ երիտասարդը գնացել էր Մադդալենա կղզին, որտեղ նորան սպասում էր իր սիրուհին։ Թէպէտ սաստիկ անձրևից և փոթորկից նա վախենում էր գնալ, բայց որովհետև նա խօսք էր արել իր սիրելուհին նշանադրելու ժամանակին լինել այն տեղ, նա գնաց. երիտասարդ սրիտրդն ևս, որովհետև ինքն ևս իր կողմից սաստիկ սիրահարված էր, չը նայելով խառնաչփոթի եղանակին նկել էր նշանադրելու տեղը։

—Երկու խօսքի համար եկայ այստեղ, պէտք է չասացի, իմ ուրախութիւնս, որովհետև ինձ որոնում են իմ ընկերները։

—Ը դիտեմ ինչպէս չնորհակալ լինեմ քեզանից, իմ սիրելիս, որ դու եկար այս վատ եղանակին։ Բայց, Աստուած իմ, ինչպէս կարողացար լողալ այս փոքրիկ ընկուզենուց կղզեակ։

—Լ՛ս, բոլորը մի է. բայց այլապէս անկարելի էր, պատասխանեց երիտասարդ գարիբալդիականը։

—Բայց դու ինչպէս կարող ես վերադառնալ տուն, միթէ կրկին այս փոքրիկ նաւակով, երկիղով չնայելց օրիորդը։

—Բայց ուրիշ կերպով անկարելի է։ Սիրահարները խօսեցին, համբուրեցին միմեանց և բաժանվեցան։

Երիտասարդը այնքան երջանիկ էր տեսնելով իր սրտի առարկան, որ բոլորովին մոռացել էր վտանգը և ընկաւ ճանապարհ իր ընկուզենու կեղեակը։ Բայց հալիս նա հետացել էր հրացանի գնդակի հետաքրքրութեան չափ Մադդալենա կղզուց, բարձրացաւ մի այնպիսի սաստիկ քամի, որ երևում էր թէ ալիքները պատրաստվում էին կուլ տալու նաւակին և նորա քաջին։

Երիտասարդը մեծ զժուարութեամբ կառավարում էր թիակներով, նա ուժից ընկնում էր։ Նա մի քանի րոպէ կարծում էր իրան արդէն խեղդված։ Ալիքների հոսանքը սաստիկ էր և զժուարանում էր հակառակվել նորա հետ։ Վերջապէս անպին ալիքները նորան նետեցին կապրերայի ափը, հա-

Fonds A.R.A.M

Fonds A.R.A.M

ԵՐԻՎԱՆԻ ՏԱՍՆԱԲԱԺԻՆ

ՀԱՄԱՐՈՒՑԱԿ ՏԵՂԵԿՈՒԹԻՒՆ

16-ին Հոկտեմբերի

Նոյն օրը Երիվանի տասնաբաժնի ոստիկանական վարչութեան մօտ գտնուող «Սասուն» թերթի խմբագրատանը ներկայացած էին Ղարաքիլիսայի գաւառապետ Ա. Ա. Ռոստոմովը և Ղարաքիլիսայի գաւառական ոստիկանապետ Ա. Ա. Ռոստոմովը, որոնք ներկայացրին Երիվանի տասնաբաժնի ոստիկանական վարչութեան հետևեալ գրութիւնը.

Ի պատասխան ձեր նամակի, որ ստացանք մեր Ղարաքիլիսայի գաւառական ոստիկանապետի միջոցով, ուր ձեր թերթի խմբագրութեան անունից ասուած էր, որ ձեր թերթի խմբագրութեան մօտ գտնուող Ղարաքիլիսայի գաւառական ոստիկանապետը պարտաւոր է ներկայանալ ձեր խմբագրատանը, որպէսզի ձեր թերթի խմբագրութիւնը կարողանայ նրան յանձնել իր ուղղելու համար մի յօդուած, որ ձեր թերթի խմբագրութիւնը ստացել է Ղարաքիլիսայի գաւառական ոստիկանապետի անունով, մենք պարտք ենք համարում ձեզ տեղեկացնել հետևեալը.

Ղարաքիլիսայի գաւառական ոստիկանապետը ոչ մի կերպ չի կարող ձեր խմբագրատանը ներկայանալ յօդուածը ուղղելու համար, որովհետև նա ոչ մի յօդուած չի ստացել ձեր խմբագրութիւնից, ոչ էլ ինքը ունի որևէ գործ ձեր խմբագրութեան հետ, ուստի և ձեր խմբագրութիւնը ոչ մի իրաւունք չունի նրան կանչելու ձեր խմբագրատունը։ Ղարաքիլիսայի գաւառական ոստիկանապետը ձեր թերթի խմբագրութեան հետ ոչ մի գործ չունի, ուստի և ձեր խմբագրութիւնը ոչ մի իրաւունք չունի նրան կանչելու ձեր խմբագրատունը։ Ղարաքիլիսայի գաւառական ոստիկանապետը ձեր թերթի խմբագրութեան հետ ոչ մի գործ չունի, ուստի և ձեր խմբագրութիւնը ոչ մի իրաւունք չունի նրան կանչելու ձեր խմբագրատունը։

Ղարաքիլիսայի գաւառական ոստիկանապետ Ա. Ռոստոմով

մեր կողմից մեր համոզում խորհուրդը նամանավանդ պատիւ ենք համարում աւագ քահանայ քննութիւնները. զուգէ մեր միտքը ունէր արձանագրել օգուտ բերի որպէս նախամանուկներին, նմանապէս և երկաթուղիներին: Երկաթուղու ընկերութիւնները ստիպված են լինելու, կրնամ ենք, իբ այսպէս և իբ այնպէս ունենալու տեսական հեղափոխ վագոններ: Բայց որպէս զի երկաթուղիների ընկերութիւնները ազատուին այն տհաճ դիմաբերի վատնելուց, վագոնների կառուցման համար և դասակարգած վագոններ կրկին անգամ յետ բերելուց, իմ խորհուրդ է տալիս մի անգամ ամբողջովին նշանակել միայն մարքսր փոստային համար, առանց ապրանքների: Այդպիսով մի անգամով հատատարված կ՚ լինի մի անհատ ու. Նօթերի հետ և հետևապէս մեծապատճառութեան պիտի ինքն իրան չքանայ է: Ապրանքների ճշմարիտ հատատարութիւնը ներկայացնում է ամենակենսական և հարկաւոր միջոց բոլոր յարուցած հարցերի վճռանատութիւնը:

Ա. Չամչեանեան

ՆԱՄԱԿ ԹՄԲԱՓՐԻՆ

Թիֆլիս, 15 Նոյեմբերի

Ներկայ թուականի «Մշակ» լրագրի № 147 մէջ կարդացի Կօջօրեցի ստորագրութեամբ մի նամակ, որում ու. նամակագիրը կանգնում էր Կօջօրի հայոց եկեղեցու չինութեան համար ժողոված գումարի քանակութեան, նրա գործադրութեան և մանաւանդ տեղեկութիւններ ստանալ եկեղեցուց մնացի չինութեան մասին: Թէև զուտ վերաբերեալ բոլոր հարցերը և տեղեկութիւնները հանդերձ կօնսիստորիայից ստաց Թայիրեանցին ժամանակին մատեանով իր ժամանակին ստաց են հոգ. իշխանութիւնս, սակայն ու. Կօջօրեցու և նրա հետ զուգ չատերի զանազան կարծիքները և ենթադրութիւնները փարատելու համար, ես իրան իրաւունք տեղական քահանայ, պարտք եմ համարում հոգ. իշխանութեան առաջ մոլոր և ծանուց մատենից և ու. Աղէքսանդր Ղազարեան Թայիրեանի կոնսիստորիային առաջ յայտարարութիւնից մի մասնաւոր քաղուածք առնել և հրատարակել:

Կօջօրի հայոց առաջ կարապետ եկեղեցու չինութեան վրա ծախք եղել է ընդամենը 10,878 ր. 40 կ.: Այս գումարից 2991 ր. նուիրատուութիւն է բարեպաշտ ժողովրդականներից, իսկ մնացեալ 7,887 ր. 40 կօպ. ծախսել է ու. Աղէքսանդր Ղազարեան Թայիրեանը իր սեփականութիւնից, չը հաշուելով նրա նուիրած գեղեցիկ սեղն համար, որ 140 սաժէն է: Եկեղեցու մէջ իւրաքանչիւր սարի մոմավաճառութիւնից վերահատուցանեմ գոյացել է արդիւնք 60—70 րուբլի, որը և ծախսել է եկեղեցու պահպանի վրա:

Կօջօրի հայոց եկեղեցու մօտիկ չինութիւնը, որ բաղկացած է երեք սենեակից, երկուսը՝ երեք երեք սենեակներից իրանց խոհանոցներով և մէկը չորս սենեակից՝ իր երկու խոհանոցներով,—չինել է ու. Աղէքսանդր Ղազարեան Թայիրեանը իր սեփական ծախքով իր սեփական հողի վրա: Այս չինութեան մասին, ու. Թայիրեանը կոնսիստորիային առած իր յայտարարութեան մէջ ասել է, որ չինութեան պահպանութիւնները լրացնելուց յետոյ ներկայացուն հատատատութեամբ՝ ասանգել է անդարձ, որ պէտք է նորին Կօջօրի հայոց եկեղեցուն:

Այդ անները չինված են հետևեալ նպատակով: Երեք առանձին սենեակները, որոնք գտնվում են դէպի արևմտեան կողմը, պէտք է իւրաքանչիւր տարի տրուին վարձով և փողերը ժողովին մի դրամատան մէջ, որպէս զի տարեկան եղած ժամանակ գործադրուին եկեղեցու չինութեան և նորոգութեան համար: Չորս սենեակներից բաղկացած տան վերնայարկի երկու սենեակները պէտք է տրուին վարձով և նրանց արդիւնքը մոմի արդեանց հետ միացնելով գործադրուի եկեղեցու տարեկան ծախքերի համար. ներքնայարկի երկու սենեակները նա ուխտաւորաց համար են: Իսկ առանձին դէպի հիւսիս գտնված երեք սենեակները պէտք է տրուին տեղական քահանայի բնակութեան համար:

Ճշմարիտ է ու. Կօջօրեցու ասածը, թէ մոմի արդիւնքով անկարելի է եկեղեցու տարեկան ծախքերը հոգալ: Պ. Թայիրեանին այդ յայտնի է եղել և նա իր յայտարարութեամբ յանձն է առել ինքն հոգալու եկեղեցու չինութեան և նորոգութեան ծախքերը մինչև վերոյիշեալ տների յանձնելը եկեղեցուն: Հենց այս տարի եկեղեցու պարապի հիւսիսային պատի չինութեան և այլ կարիքաւորների վրա նա ծախսել է մինչև 500 րուբլի: Պ. Թայիրեանի յայտարարութեան մէջ յիշված է և այս կէտը, նիմ մինչև յանուն եկեղեցուն չինած տների հատատելը. Աստուած մի արասցէ, մահ պատահի, նրա ժառանգները պարտաւոր են արբունեամբ կատարել իրանց հոր ցանկութիւնը:

Այս հանգամանքս հաշիւ և տեղեկութիւնները հաղորդելուց յետոյ, ստիպող չեմ համարում ասել, որ ոչ ոք հետաքրքիր է իմանալ բոլոր մանրամասնութիւնները, թէպ աշխատութիւն յանձն առնէ կարդալ ու. Թայիրեանի Թիֆլիսի հայոց կոնսիստորիային առած յայտարարութիւնը. այնտեղ ամենայն ինչ մանրամասնաբար գրված է:

Եպիսկ քահանայ Երզնկեանց

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

Նոյեմբերի 16-ին Թիֆլիսի բազաքային տան չինութեան վրա երկու հայ մշակներ մնացին փուլ եկած պատի աւերակների տակ: Նրանցից մէկը թէև վիրաւորված, կենդանի մնաց, իսկ միւսը մեռաւ: Ասում են թէ խեղճ մշակները պղուշացնում էին ճարտարապետին թէ տան հին պատը սպառնում է փուլ գալ, բայց նրանց բողոքի վրա ոչ ոք քաղաքային գործոններից չուզեց ուշադրութիւն դարձնել:

Մեզ խնդրում են ասել հետևեալը: «Տիկին Մկրտչեանց (Եակոբի) ատամնաբոյժ Ամերիկայից (Doctor of dental surgery of the Baltimore College), այս օրերս Թիֆլիս գալով, բժշկում է ատամների ամեն տեսակ ցաւեր և անում է հարկաւոր օպերացիաներ ամերիկական ամենանոր ձեւով: Տիկինը ընդունում է միայն կանանց և երեխաներին ամեն օր, առաւօտեան 10 ժամից մինչև 3 ժամ: Բնակվում է Լիսիցեանի տանը, Սպասկայա և Սերգիեվսկայա փողոցների անկիւնում»:

Նոյեմբերի 21-ին Ազծրանաւ թատրոնում լինելու են քաղաքային ընտրութիւններ երրորդ բաժնի ձայնատուներին, առաջիկայ 1883—1886 քառամեայի համար:

Լրագիրները հաղորդում են որ Մոսկվայի բօրսային կոմիտեսը խնդիրք է ներկայացրել կառավարութեանը կովկասեան արանդիտի մասին: Իր հաւատար զեկուցման մէջ իշխան Մէնշիկով առաջ փաստերով և վիճակագրական թուանշաններով, առանձին ուշադրութիւն է դարձնում հարցի վրա, ցոյց տալով որ վերջին տասնամեայ ընթացքում, դուքսերնայսպատր կովկասեան արանդիտի զարգացման հետ, ընդարձակվել և առաջ վաճառականութիւնը դէպի Պարսկաստան: Ի նկատի ունենալով այդ և ուրիշ բազմաթիւ հանգամանքներ, զեկուցողը վերջացնում իր զեկուցումը առաջարկելով ներկայացնել Ֆինանսների մինիստրութեանը մի դրութիւն, յայտնելով այն միտքը, որ կովկասեան արանդիտի պահպանելը ապագայում ոչ թէ միայն արդեապէս չէ առաջ վաճառականութեանը Ասիայում, բայց և օգտակար է: Զուգընթացաբար արանդիտի գոյութեան հետ, մեր վաճառականութիւնը ընդարձակվից, որովհետև բազմացան անդամախտութեան միջոցներ, ինչպես կատեան ծովի նաւատորմը, կատարելագործվից մերձկասեան պատճառով, մեր ապրանքների յատկութիւնը, նոր գործ առաջ ձեռնարկութեան ոգին: Հոգալ այդ կողմի վրա ուշադրութիւն դարձրից նոյն ներսում ու. Սկալկովսկին, թէև սա համակրութիւն ցոյց տուեց գէպի արանդիտի աշնչացնելը: Սկալկովսկին, բայց սրանից, մատնացոյց արաւ այն հանգամանքի վրա, որ արանդիտը աշնչացնելու ցանկութեան մէջ, նկատում է դիւանագործ ոգով և զգայացում այն կետարտանգային դէմ, որ կատարվում է արանդիտի անունով նրանը նկատեց և ու. Նիկոլաեւ, որ մատնակցից Ֆինանսական մինիստրութեան կարգադրութեամբ կազմած առանձին խորհրդի մէջ, արանդիտի հարցի առիթով: Այդ խորհրդի մէջ Մոսկվայի գործարանատէրերը հետևեալ յայտնութիւնը արին կովկասեան վիճակագրութեան ժամանակ, այնպէս որ վերջ ի վերջոյ մանուֆակտուրային ապրանքի գինը նրանով նկատից. «Մեր բոլոր բազդները, պարտներ, ուղղված են, ասում, ոչ թէ նոյն իսկ արանդիտի գոյութեան դէմ, այլ նրա ամբողջով կատարվող կենտրոնացման դէմ»: Դարան ու. Տուխոլկա, մաքսային բաժնի դիրեկտոր, պատասխանեց որ այդ գեղծումների դէմ ամենաանգործ միջոցներ կը գործադրվեն, որ այժմ չատ հնարաւոր բան է, քանի որ կովկասեան մաքսային վարչութիւնը այժմ ենթարկվում է Ֆինանսների մինիստրութեան իշխանութեանը: Վիճաբանութիւնները, առհասարակ, համոզեցին ընկերութեանը իշխան Մէնշիկովի մտքերի հիմնաւորութեան մէջ: Վճռվեցաւ ասել խիստ և մանրամասն կերպով քննել հարցը Ֆինանսների մինիստրութեան կարգադրութեան հատատատված առանձին յանձնաժողովի մէջ, որպէս զի նկատի գէպք է ունենալ թէ Մոսկվայի գործարանատէրերի յիշատակագիրը և թէ իշխ. Մէնշիկովի զեկուցումը:

ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ԱՐՏԱՔԻՆ ԼՈՒՐԵՐ

—«Բէյտերի ընկերութեան» Ալէքսանդրիայից հետագրում են: կարծում են, որ Նաբար-փաշան նիստատ կը հասնի այս ամսվայ վերջը:

—Գինուաից, նոյեմբերի 18-ին սատգված տեղեկութիւնների համեմատ, այդ քաղաքի քաղաքագլուխը դիմեց ազգաբնակութեանը մի չորքատանոց, որով հրատիրում է նրան սիրալիր կերպով ընդունել Գերմանիայի և Շվէյցարիայի ներկայացուցիչներին, որոնք եկել են Գինուա ուսումնասիրելու տեղական մեծ ճանապարհի վախճանը, որ մտանգնում է Մերձերկրական ծովը կենտրոնական Եւրոպային, և Սէն-Գոտարդեան երկաթուղուն: Միևնոյն հանգամանքներ արդէն եկել են:

—Լոնդոնից հետագրում են նոյեմբերի 10-ին: Մեղադրական ակտը մեղադրում է Ադոլֆին այն բանում, որ նա հրամայել տպելու և կողոպտել Ալէքսանդրիան և պրոում էր եվրոպացիներին ապատամբել խեդիվի դէմ: Ադոլֆ-փաշայի բռնած պաշտօնները, Բրաղէյ և Նէվիր, կամենում են ապացուցանել դատաստանական քննութեան ժամանակ, որ օրինական մարդ ոչինչ ապատամբութիւն չը կար, որովհետև Ե. Դուբը սկզբից իրաւասում էր զինուորական կատակցութեան առաջնորդի վարմունքը. մինչև անգամ խեդիվը երկար ժամանակ տատանվում էր և, Դերվիշ-փաշայի գալուց յետոյ հաւանութիւն տուեց, որ անգլիական զօրքերը բնդդիմադրեն:

ԽԱՒՆ ԼՈՒՐԵՐ

Նոր-Օրլեանում վաճառանիցաւ չամպատա (սատրիճ) խաղացող պ. Մօրֆի, որը համարեա հասմաչարհային հռչակ ունէր: Ծնվելով 1837 թվին, նա պատանեկութեան հասակից սկսեց չափից դուրս մեծ ընդունակութիւններ ցոյց տալ դէպի խաղերը, որոնք հիմնված էին հաշվի վրա, և այնպիսի հմտութիւն չամպատային խաղի մէջ, որ 12 տարեկան հասակում յաղթում էր Միացեալ-Նահանգների առնաչաւ խաղացողներին: Նրա հռչակը չուտով և մինչև Անգլիա հասաւ: Շախմատային խաղերի անգլիական բնկերութիւնը հրատիրեց նրան իր տարեկան ժողովին, և Մօրֆին, սկզբում յաղթվելով, իսկոյն փառաւոր կերպով յաղթեց: Ֆրանսիայում և Գերմանիայում նա խաղաց էր մինչ ամի պատիտա և նրանցից միայն մէկը տանուլ տուեց: Մօրֆին պարտասմանքով վատասան էր. նա չէր սիրում փողով խաղալ, և վեր էր դասում, երբ տանում էր, նկատչական առեղծագործութիւններ: 1876 թվին նա խելագարվեցաւ. այդ ժամանակից, երբ նրան ցոյց էին տալի չամպատի տախտակը, նա զարհուրում էր, և յայտնում էր որ հանգստացուցիչ անգամ չունի այդ խաղի մասին:

ՀՄՇԱԿԻ ՀԵՌԱԳԻՐՆԵՐ

ՀԻՒՍԻՍԱՅԻՆ ԹՈՒՐՔԱԿԱՍՈՒԹԻՒՆԻՑ

ՍԻՒՍԱՍ, 12 նոյեմբերի: Իւրաքանչիւր գաղիականին ուսուցիչ տեղափոխելու գինը կիսակրով որոշված է 60 ր.: Գնակալի մէջ կորաւ բելգիական „Գժուն Բաթերը“ շոգենաւը, որ երկաթի և ապակիի բեռն ունէր 75,000 պուդ:

ԹՈՒՐՈՎ, 17 նոյեմբերի: Գրականական երաժշտական երեկոն յօգուտ կանանց բժշկական կուրսերի 1300 ր. եկամուտ տուեց:

ՍԻԶՐԱՆ, 18 նոյեմբերի: Կալուածատէրերի միմիայն ցանելու փոյթը կատարելագէս ապահովեցաւ Սիմբիրսկի, Կրիմի և Տամբովի մէջ եղանակը ուշ է: Ուսուցչը զանգաղ է գնում:

ՌԻԼԻՆ, 17 նոյեմբերի: Հանուսի ամրոցի շրջանին ապատաբերի գժբաղդութիւն է սպատահել գետերի հեղեղից: Մարդ և կէօղ սատիկ վնասվեցան: կոյսրուհու ուղղորդած հեռագիրը կոյսրին նկարագրում է աւերմուն սպատահերի տեսարան կօրինոցի մէջ: երկաթուղական և փոստային հաղորդակցութիւնները դադարեցրած են: Նրկակայ գարի ընթացքում պէտ այդպիսի գժբաղդութիւն չէ եղած:

ՓԱՐԻԶ, 17 նոյեմբերի: Գամբետտա թեթեւ վիրաւորեց իր ոտ ձեռքը գնելով մի բէվոլվեր: Տարաձայնութիւններ սկսվեցին Ֆրանսիայի և Մադագասկարի մէջ, որի դէմ դիմաւորութիւն կայ արշաւանք ուղարկվել:

ԴՈՒԲԼԻՆ, 17 նոյեմբերի: Գաղաքական մի քանի սպանութիւնների պատճառով ոչբայական խորհուրդը քաղաքը սպատատմված յայտնեց:

Ս. ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, 17 նոյեմբերի: „Новое Время“ լրագիրը հաղորդում է, որ կովկասեան արանդիտի մասին կը սկսվի առանձին խորհուրդ, որին կը մասնակցեն գիւնանների, արտաքին գործերի, ճանապարհների հաղորդակցութեան մինիստրները, ծովային մինիստրութեան կառավարիչը և պետական կոնտրոլէօր: Լուր է սատգածված, որ խորհուրդին կը մասնակցէ նոյնպես կովկասեան գլխաւոր կառավարիչը: Գնովելի նուիրերի թուում են Մոսկվայի և Նիժնեգորոդեան բօրսային մասնաժողովների դրութիւնները: Մեղադրական ակտը փոխատու ընկերութեան մէջ գործած գեղծումների մասին անբատատար է համարված և փոխարինված է պատատանական պալատային առանձին վճռով: „Голосъ“ լրագիրը հաղորդում է, որ յունվարի սկզբին Ս. Պետերբուրգի մէջ կը կայանայ ուսուցչական ժողով ժողովրդական յուսատութեան մինիստրութեան ուսուցիչներից:

ՓԱՐԻԶ, 17 նոյեմբերի: կառավարութիւնը հրամայեց վերցնել դրօշակը Մադագասկարի գեսպանութեան բնակարանից: Գեսպանութիւնը հեռանում է Փարիզից: Մի պատերազմական նաւ է ուղարկվում Մադագասկար: Անգլիական մամուլը Ֆրանսիայի տարաձայնութիւնը Մադագասկարի հետ առաջինի կողմից մի ձգտումն է համարում ընդարձակել իր գաղթականատերները:

Խմբագիր—հրատարակող ԳՐԻԳՈՐ ԱՐԾՐՈՒՆԻ

Fonds A.R.A.M

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ

ԱՏԱՄՆԱԲՈՑԻ ԱՄԵՐԻԿԱՑԻՑ (Doctor of Dental Surgery of the Baltimore College)։

ՏԻԿԻՆ ՄԿՐՏՉԵԱՆՑ, ծն. եակոբի, բժշկում է ամէն տեսակ ԱՏԱՄԻ ՑԱՒԵՐ և առնում է հարկաւոր ՕՊԵՐԱՑԻԱՆԵՐԸ ամերիկայի ամենանոր ձեւով։ Ընդունում է միայն ԿԱՆԱՆՑ և ԵՐԵԽԱՆԵՐԻՆ 10—3 ժամը։ Լիսեցօվի տանը, Սադօվայա և Սերգիեվսկայա փողոցների անկիւնում։

1—15

ԲԱՑԻ

ԽԱՄՈՒՑԻ

ՄԷԼԻՔՈՒԹԻՒՆՆԵՐԸ

ԳԻՆՆ Է 1 Ր. 50 Կ.

Գիրքը բաղկացած է 467 երեսներից

ԹԻՖԼԻՍՈՒՄ վաճառվում է

„Մշակի“ խմբագրատանը.—„Կենսրնական դրամատունում“ Մերիմանովի տանը № № 3 և 4. Պ. Զաքարիայ Գրիգորեանցի „Կովկասեան դրամատունում“.—Պ. Էնֆիաձեանցի Ծխախոտի խանութում.—Պ. Շահինեանցի Ծխախոտի խանութում։

Օտարաքաղաքացիք կարող են դիմել կամ յիշեալ տեղերը, կամ ուղղակի հեղինակին հետեւեալ հասցէով։

ТИФЛИСЪ. Редакція „Мшакъ“.
РАФФИ.

Վարձով է տրւում ԹԱՆՈՒԹ ՄԱՒՌԱՆՈՎ Ալափխանայի կարգում, թուղքերի հրատարակի վրայ։ Գնի մասին տեղեկանալ ՇԱՀՎԵՐԴԵԱՆԻ դործակալութեան մէջ։

3—5

ԹԻՖԼԻՍԻ ՔԱՂԱՔԱՑԻՆ ՎԱՐՉՈՒԹԻՒՆԸ յայտնում է, որ ներկայ Նոյեմբերի 20-ին նշանակված է երկրորդ անգամ աճուրդ Հոկտեմբերի 28-ին չը կայացածի տեղ կապալով տալու համար տուլքերը քաղաքային սպանդանոցի մէջ անասուններ մորթելու համար։ Աճուրդին մասնակցել ցանկացողները կարող են տեսնել պայմանները վարչութեան գրասենեակի մէջ առաւօտեան 9 մինչև 2 ժամը։

3—3

ԹՈՒՔԱՆԱԿԱՆ ԽՆԴԻՐՆԵՐ

ա ք ս ա կ ա ր ք ա կ ա ն ը ն թ ա ց ք

Գրիգորի Վարձելեան

հայոց միջնակարգ ուսումնարանների համար մանր առաջին (ամբողջ թուեր)

Մանրլի տակից լոյս տեսաւ նոյն խնդիրների երկրորդ մասը (կոտորակ թուեր և երրորդական կանոններ)։

Գինն է 40 կոպ.

Ուսումնարաններին զիջուի 20%։

Վաճառում է Վ. Շահվերդեանի լրագրական գործակալութեան խանութում։

Օտար տեղերից գիմում են այս հասցէով Тифлисъ, въ Агентство В. Шавердова:

Տրւում է ՎԱՐՁՈՎ մի լոյս ՍԵՆՅԱԿ մեբելով, վառելափայտով, սամովարով և ծառայով, ամսեկան 12 րուբլով։ կուկիայում, Խարլովսկայա փողոց, տուն № 9, նկատի յարկում։

ОТДАЕТСЯ одна свѣтлая КОМПАТА съ мебелью, отопленіемъ, самоваромъ и прислугою за 12 р. въ мѣсяцъ. Куки, Исарловская улица, домъ № 9, нижній этажъ.

6—10

ԼՈՅՍ ՏԵՍԱԾ

„ՀԱՅՈՑ ԼԵԶՈՒԻ ՈՒՍՈՒՑԻՉ“

ԵՐԿՐՈՐԴ ՏԱՐՈՒԱՑ

Պատրաստ է

„Կովկասեան գրախանութի“ հրատարակութեամբ և ծախվում է նոյն գրախանութում։

Գինը 25 կոպեկ է։

Գումարով առնող և կանխիկ վճարողին 20% զիջուի կը լինի։

կարելի է դիմել.

ТИФЛИСЪ. Кавказская книжная торговля—З. П. Грикурову.

կամ

ТИФЛИСЪ. на Авлабарѣ. Ованесу Назарянцъ.

Ց. Նազարեանց.

Սոսվեցնում եմ **ԿՐԿՆԱԿԻ ԻՏԱԼԱԿԱՆ ՀԱՇԻԱՊԱՀՈՒԹԻՒՆ ՀԱՑՈՑ և ՌՈՒՍԱՑ** *լեզուներով. պայմանների մասին կարող են դիմել ինձ մօտ* **ՋՈՒԲԱԼՕՎԻ** *քարվանսարայ, Գասպարեանցի մագազինում ամեն ժամանակ։*

ՍՄԲԱՏ ԳԻՏԱՏԱՐՆԱՆՑ

Վարձով են տրւում ԵՐԵՔ ԽԱՆՈՒԹՆԵՐ մառաններով և առանձին ԳԻՆՈՒ ՄԱՌԱՆ Միխայլօվսկայա փողոցի վրայ, տուն № 11։ Գնի մասին տեղեկանալ նոյն տեղը գտնւած ուշերից։

3—3

ՔԱՂԱՔԱՑԻՆ ՎԱՐՉՈՒԹԻՒՆԸ յայտնում է, որ կիրակի, Նոյեմբերի 21-ին, առաւօտեան 10 ժամին Արծրունու թաղօնում կը կատարվեն երրորդ կարգի ձայնաւորների ընտրութիւնները։

3—3

КАВКАЗСКОЕ ОТДѢЛЕНІЕ ГОЛОСА

ОТКРЫТА ПОДПИСКА НА ГАЗЕТУ

„ГОЛОСЪ“

На 1883 годъ

Подписная цѣна съ пересылкою въ годъ 17 р.

Подписка и объявленія принимаются въ Центральной Книжной торговли въ д. Мириманова.

2—3 (1)

Միջի փողոց, կաթօլիչեսկայա փողոցի անկիւն № 13.

Աւելի էժան, քան թէ ուրիշ տեղ ծախվում են. ՎԻԵՆՆԱՑԻ ՄԵԲԵԼ ամենայն տեսակ, ֆրանսիական և անգլիական երկաթէ ԿԱՐԱՎԱԹՆԵՐ 8—30 ր., չամադաններ 250—25 ր., սակվօյաժներ 1. 30—12 ր., սուն դուկներ ձանապարհի 6—35 ր., մարտներ (погребцы) 6—25 ր., սամօվարներ 60 կ.—1.25 ֆունտ., կուխոնի պղնձէ ամաններ, գերմանիայի երկաթէ էմալով ամաններ. ուդմիվալնիկներ մրատօրներ 38 ր.—75 ր., հրացաններ երկու լուլանի 6—32 ր., ռեվոլվէրներ ամենայն տեսակ 3. 50—30 ր., պատրոններ. (դուլաններ) բէվօլվէրի, սիգար Ռինդարպէ ֆաբրիկից. պապիրոս և թամբաքու կուշնարօվի գիլզի պապիրօսի. 5,000 ՖՈՒՆՏ ԹԻՑ (չայ) ԵԳ. ՊԱՊՈՎՆԵՐԻ, բրնկվիտ. (սուխար չայու և կաֆէի) էմնէմի. կօֆէ էմնէմի և Մինեչանի. պեսերբուրգում 40—1 ր. 25 կ. հայելիներ ամենայն տեսակ 28 կ.—240 ր., պրօրկայ գինեվաճառների, հանքային և գարեջրի (для зельтерскихъ водъ и пива) դուլթուկ (пухъ), պադնոսներ սամվարի և չայու, դանակ չանդալ պանադան ֆաբրիկանների 1 ր. 20 կ.—25 ր. պուժինը. դիշակոմներ 1 ր. 80 կ.—5—60 կ. գանակ ջրի 1—60 կ.—12 ր., գանակ հացի 20 կ.—1 ր., հատը, կուխոնի 1—40 մինչև 3—20 կ. պրիբօր. մի կարելու մաշինայ. Անգլիական ուեֆներ, Բրիտանակի չայնիկներ, կաֆենիկներ ամենայն տեսակ, Չայգոյներ կաֆէի համար, ֆիլտեր—ջուր մաքրելու, կրախմալ կարօրկեն 18 կ., վաքս Ֆրանսիայի ժանկոյ, մեղրի փոշի, կանվերտներ, աւելդուչ, մատիա, գրիչ երկաթէ, գրչակոթ, քարեսախատակ, թանաք, թանաքամաններ, պրեսպապիռներ, դպրոցի տետրներ և չայու ֆրաժէ, վարշավի և բրիտանակի գուժինը 1—50 կ. մինչև 12 ր., և չայու 45 կ.—5 ր., չուխիչկէք 45 կ.—5 ր., շամադաններ ամեն տեսակ 25 կ.—12 ր. Ջուխտ, պոլսապոշկաններ վարշավու, ՌԵՁԻՆԻ ԿԱԼՕՇՆԵՐ, ամեն տեսակ, գուլբաններ կանանց և մարդկանց 15 կ.—50 կ. Ջուխտ, շապիկներ, մարդկերանց գալուսաիկներ, գոնտիկներ 35 կ.—4—50 կ., հատ, անձրևի և շոքի. անդրեր շրմայու ոսկրէ, գուտապերչովի և փայտէ, շչուականեր գլխի, շորի, ատոպկի, պոլի և կարտի համար. չուլքի թէկ (бумага) մատակի կօճի և շարկ (гарусъ) ֆէլչատակէք մարդկանց և կանանց, պորտմոնեներ, քիսաներ, պապիրոսի ամաններ և մանր գոլանտերեյնի ապրանքներ, տարան ամեն տեսակ 3 կ.,—30 կ., կատր, Հոտավէտ ջրեր, պուդրա, Գլիցերին ջրի քացախ, Հոտավէտ պարաշոկներ կիվերի ԼԱԲՕՐԱՏՈՐԻՑ. և այլն և այլն և այլն։

Վաճառականներին առանձին պայմաններով և զիջումով վերոյիշեալ ապրանքներ մեծ քանակութեամբ մշտապէս գտնւում են ՄԻՔԱՑԵԼ ՏԵՐ ՆԻԿՈՂՕՍՅԱՆՑԻ պահեստում. (въ складѣ) Միջի փողոցում կաթօլիկայց փողոցի անկիւնում № 13.

Օտարաքաղաքացիք կարող են դիմել հետեւեալ հասցէով. Тифлисъ Михаилу Н. Теръ-Никогосову.

176—180

Միջի փողոց, կաթօլիչեսկայա փողոցի անկիւն № 13.

ՕՎՈՍՏՈՍ ԱՄՍԻ ՄԷԿԻՑ

ՍԿՍԵՑ ՀՐԱՏԱՐԱԿՎԵԼ ՎԻԵՆՆԱՑՈՒՄ

L'ORIENTAL

ՖՐԱՆՍԵՐԷՆ ԹԵՐԹԸ, ԱՄԻՍԸ ԵՐԿՈՒ ԱՆԳԱՄ։

„Ժուրնալ դ'Օրիան“ լրագրի հին բաժանորդներին գադարեցրած թերթի տեղ կուղարկվի այդ նոր հրատարակութիւնը։

„L'Oriental“ թերթի տարեկան գինը 8 րուբլ է, կէս տարվանը 4 րուբլ։

Գրվել կարելի է „ՄՇԱԿԻ“ խմբագրութեան մէջ, կամ ուղղակի Վիեննայում գիմելով հետեւեալ հասարակ հասցէով. Vienne (Autriche) M. F. Salles I. Neuer Markt 9.

Дозволено цензурою, Тифлисъ, 18 Ноября 1882 года.

Типогр. Главн. Упр. Главнонач. гражд. час., Лор.-Мелик. ул. каз. д.

Fonds A.R.A.M

№ 217 Նոյեմբերի 23 Երեքշաբթի 1882 ՏԱՍՆԵՄԵԿԵՐՈՐԴ ՏԱՐԻ Նոյեմբերի 23 Երեքշաբթի № 217

Տարեկան գինը 10 րուբլի, կէս տարւանը 6 րուբլի։
Առանձին համարները 5 կոպէկով։

Թիֆլիսում գրւում են միմիայն խմբագրատան մէջ։

Յառաջադրանքը գնում են ուղղակի
Тифлисъ. Редакція «Мшакъ»

ՄՇԱԿ

Խմբագրատունը բաց է առաւօտեան 10—2 ժամ
(Բացի կիրակի և տօն օրերից)։

Յայտարարութիւն ընդունւում է ամէն լեզուով։

Յայտարարութիւնների համար վճարւում են
իւրաքանչիւր բառին 2 կոպէկ։

ՔԱՂԱՔԱԿԱՆ ԵՒ ԳՐԱԿԱՆԱԿԱՆ

„ՄՇԱԿ“

ԱՄԵՆՕՐԵԱ ԼՐԱԳԻՐ

(ՏԱՍՆ ԵՒ ԵՐԿՐՈՐԴ ՏԱՐԻ)

ԱՌԱՋԻԿԱՑ **1883** ԹՒԻՆ

Կը հրատարակւի նոյն դիրքով և նոյն պրօգրամայով.

ՊՐՕԳՐԱՄ

I. ՏԷՐՈՒԹԵԱՆ ԿԱՐԳԱԴՐՈՒԹԻՒՆՆԵՐ։ II. ԱՌԱՋՆՈՐԴՈՂ ՑՕՒՈՒԱԾՆԵՐ։ III. ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ։ Ընդհանուր յօդուածներ, ներքաղաքական տեսութիւններ, լուրեր։ IV. ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ։ Ընդհանուր յօդուածներ, ներքաղաքական տեսութիւններ, լուրեր։ V. ԽՄԲԻ ԼՈՒՐԵՐ։ VI. ՀԵՌԱԳԻՐՆԵՐ։ VII. ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ։ Գեղեցկական, վէպեր, ինքնագրոյն և թարգմանական յօդուածներ դիտութեան ամէն ճիւղերից, ներքաղաքական տեսութիւններ։ VIII. ՅԱՑՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ։

ԲԱԺԱՆՈՐԴԱԳԻՆ։ Տարեկան 10 րուբլի, վեց ամսւայ 6 րուբլի, իւրաքանչիւր ամսւայ 1 րուբլի։
ՀԱՏՈՒԿ համարները 5 կոպէկի։
ՀԱՍՑԷՆ։ *Тифлисъ, редакція «Мшакъ.»*

Խմբագիր—Հրատարակող ԳԻՒՏՈՒՐ ԱՐԾՐՈՒՆԻ

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ։ Նամակ խմբագրից։ Ներքին լուրեր։—ՀԵՌԱԳԻՐՆԵՐ։—ՅԱՑՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ։—ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ։ Նամակ Թիւրքիայից։

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՆԱՄԱԿ ԽՄԲԱԳՐԻՆ

—

Թիֆլիս, 20 Նոյեմբերի

Մի քանի ժամանակ է, որ հայ դիւանագիտական խումբը նոր յայտնութիւններ է տալիս էժանագնով գներով, որոնց մեզ յայտնի է, այն նպատակով,

Ձր նայելով, որ խումբը իր համար զոհողութիւնները շատ համեստ չէրջան է գնահատել, չը նայելով, որ նրա անդամները կատարելապէս ոչինչ վարձատրութիւն չեն ստանում իրանց աշխատանքի համար, այնու ամենայնիւ գոհունակ են մարդիկ, որոնք զանազան ճանապարհներով և միջոցներով աշխատում են մտնել դիւանագիտական խմբի գործունէութեան ասպարէզները։ Այդ մարդիկ չեն կասկածում այցելել թատրօնը և չը բաւականանալով դրանով, համոզում են և ուրիշներին չը գնալ թատրօն, ասելով, թէ արժէ միթէ այցելել այդ ներկայացութիւնները թատրօնական մանաւոտզովի ներկայացութիւններից յետոյ։

Այդպիսի վարմունքը, նիհէ ասելի չունենք, անհետաքրքրութիւն է, և ոմանք ինչի համար։ Ամէնքը կը համաձայնուին, որ Թիֆլիսի հայերից հազարաւոր գործակատարներ կան, որոնք իրանց ազատ ժամանակը, որ գլխաւորապէս դիշերներով է լինում, անց են կացնում Թիֆլիսի մէջ վերջին ժամանակ բազմացած այգիներում, որտեղ պարահանդէսներ, ցիպանների կօնցերտների և ուրիշ զանազանութիւններով սերմանւում է անբարոյականութիւն։ Այդ այգիները և դրանց նման տեղերում հարիւրաւոր երիտասարդներ զատարկում են իրանց գրպանները և մի և նոյն ժամանակ վչանում են բարոյապէս։ Աղէտք ասելի լաւ չէր լինի, որ այդ երիտասարդները մի օր և է 70 կ. վճարելին և օգտակար կերպով իրանց ժամանակը թատրօնի մէջ անցկացնելին։ Հարիւրաւոր մայր վաճառականներ և արհեստաւորներ կան, որոնք իրանց գործը վերջացնելուց յետոյ կամ թղթախաղով են զբաղուած լինում և րուբլիներ ծախում, կամ այս կամ այն հիւրանոցում և պանդոկում անդադրմատար ոչնչացնում են ևախնեաց դիներ։ Լաւ չէր լինի արդեօք, որ դրա փոխարէն այդ մարդիկ թատրօն գնային։ Այդ շրջանների մարդկերանց կանայք, աղջիկները և մայրերը բամբասանքներով և փողոցներում կաւելով են անցկացնում իրանց ժամանակը. արդեօք լաւ չէր լինի, որ դրանք ևս կարողանային թատրօն այցելել։ Այսպիսի օրինակներ հարիւրներով կարելի է բերել, բայց սրանք ևս բաւական են։

Եթէ դիւանագիտական խումբը կը կարողանայ մի քանի ժամանակ տալ ներկայացումներ էժանագնացած գներով, ծախերով լօժաները 4 ր., բազկաթոռները 2 ր. և 1 ր. 50 կ., աթոռների մի մասը 1 ր., միւս մասը 70 կ., մնացածը 50 կ. և գալերէա 30 կ., մի որոշ ժամանակից յետոյ ժողովուրդը կընտելանայ թատրօնին և նա կարող է միշտ լիքը լինել։ Իսկ այդպիսի գներով ծախված բոլոր առմանների եկամուտը ոչ թէ միայն միջոց կը տայ խումբին դոյութիւն ունենալ և չարունակել գործը, այլ մինչև անգամ նա կը կարողանայ բարւոքել իր կազմակերպութիւնը, կազմել ընտիր բէպերտուար և այլն։ Բայց մինչև այդ ժամանակ խումբը պէտք է միջոց ունենայ, նիհէ ոչինչ վարձատրութիւն չը առնայ, գոնէ ծածկել ծախսերը և երբէք աչքի առաջ չունենալ թէ մի պէտք է տայ մնաւը, նիհէ եկամուտը չը ծածկէ ծախսերը։

Այս այսպէս լինելուց յետոյ այն բոլոր անձինք, որոնց համար նշանակութիւն ունի թատրօնը, պէտք է նպաստեն դիւանագիտական խմբին և օգնեն նրան իրանց կարողութեան չափ և ոչ թէ մնաւն նրան, մանաւանդ որ խումբը իր զոհողութիւնները կուսակցական ոգի չէ տալիս և չէ արդելում ոչքի թէ ասելի ընդարձակ չափերով առնել գործը և թէ միջամտել իր գործին և նրան ասելի լաւ ուղղութիւն տալ։

Ինչպէս լսել ենք, ներկայ թատրօնական սեզոնի ընթացքում, այսինքն երեք և կէս ամսւայ ընթացքում, դիւանագիտական խմբի մէջ ամենամեծ բաժին ստացող անդամը ստացել է հազիւ 35 րուբլի։ Արդեօք այս վայել է հայ հասարակութեան համար։ Արդեօք այս լրջութիւնը խմբանպատ չեղոյ, իրաւունք ունի մէկը նկատել, թէ այս բանը թոյլ էր, միաբ վատ։ Արդեօք կարող է մէկն ասել, թէ խումբը չհանապարհական նպատակներ ունի։

Հասկանալի է մաքառումն մի և նոյն գործին ծառայող և այդ գործը դանազան կերպ հասկացող կուսակցութիւնների մէջ, բայց երբ մի կարևոր գործ թողած է և գնում են մարդիկ,

---

ձերն, անունը ալ մեծ մասամբ կը քաչուին ժողովէն։—Մնացած ժողովականներու մեծամասնութիւնը նշանաւոր է իր անձնական մաքովը։ Ո՛չ մի գիտութիւն, ոչ մի ուսում, ոչինչ մասնաւոր դարպացում։ Ամէն ինչ՝ կը տեսնես մի խումբ երեսփոխաններ որք բոլորովին կոշտ կապիտ մարդեր են, և դժբաղդաբար ասոնք երիտասարդ են։ Կը տեսնես այս մարդերը որ ոչ նստել գիտեն, ոչ կայնելու կերպ գիտեն, ոչ խօսելու եղանակ։ Յայտնի կերևի թէ այս պարոնները մարդու մէջ չեն մնծցեր և ամենևին չեն գիտեր թէ ինչ է ընկերական կրթութիւն բառածը։—Այս գումարումներ կրնանք զոհ նկատել Ազգ. ժողով։—Օրինաց և կանոնի հակառակ ոչինչ կայ, ինչ կրնանք ըսել։ Բայց իրապէս պէտք է մտածել այլ կերպ։ Թիւրքիոյ Հայոց ազգային գործերն պիտի անցրնեն 140 ներկայացուցչէ, բայց այսօր ամեն խնդիր կը լուծէ 20 կամ 30 երեսփոխանոց քուէն։ Եւ նիհէ այդ 30-ի չափ երեսփոխաններն ըլլային խելքերնին գլուխնին մարդեր կարելի էր դժգոհ չըլլալ։ Ինչ և է, մենք պարտաւոր ենք ասլ այդ գումարման Ազգ. ժողով անունը և իր վճիռներն ալ գրել Ազգ. ժողովոյ վճիռ։ Ուրեմն Ազգ. ժողովը գումարեցաւ հոկտեմբ. 28-ին և պիտի ընտրէր Քաղաքական ժողովոյ պակաս մնացած 14-ը անդամը։ Երկու ընտրելիք գիմաւ ելլի՝ ար. Սվաճեան և ար. Փեշտիմալճեան։ Պ. Սվաճեանի կողմնակիցք ժողովէն քաչուողներն և բացակայներն էին։ Պ. Փեշտիմալճեան էր ար. Զերազի պաշտպանեալը։ Մի տարի առաջ ար. Զերազ հրապարակ. ար. Փեշտիմալճեանը կը նամանեցնէր սպրի, իսկ այսօր կաշխատէր որ իր սաղ հաչակածը ըլլայ մեծ ազգային դիւկավարնեբէն։ Ինչ ըսենք։ Ասանք քաղաքական բարձր

զարձուածներ են, որուն ոչ ձեր, ոչ մեր խելքը կը հասնի։ Կրնար սասրիկ կրլլայ, ար. Զերազ կը յաջողի խլել ի նպաստ իր պաշտպանեալին քանի և եօթը քուէ։ Պ. Փեշտիմալճեան կըլլայ այսպէսով մեր Քաղաքական ժողովոյ 14-դ անդամը։ Զարմանալին հոս է որ ար. Փեշտիմալճեան ինքզինքն կը ներկայացնէ ընտրելի այսպիսի պաշտօնի մը, ամեն խնամարհութիւն յանձն կառնու այդ պաշտօնին հասնելու։ Այս կէտը պէտք է ուշադրութեան առնուի, որպէս զի զազափար մը ունենանք մեր գործիչներու բարոյականի և պատուոյ զգացման վրա։—Շատ պարզ է որ այն անձինք, որ մեր ազգային վարչութիւնը կը կազմեն, պէտք է իրարու վրայ փոխադարձ վստահութիւն ունենան, գիրար յարգեն. հոգ չէ թէ շատ հարցնելու մէջ իրարու հակակարծիք ըլլան, համաձայնութիւն գոյացնելը գժուար չէ։ Այդ ժողովին մէջ շատ գործեր կը դառնան, շատ խօսքեր տեղի կունենան։ Ինչ պիտի ըսէք երբ ժողովականներէ մին համոզուած ըլլայ թէ իր այս ինչ ընկերը Գրան լուսան է, միւսը համոզուած ըլլայ թէ այս ընկերն ալ ս և է դնացպանի մը լրտեան է։ Մէկն ալ ուրիշ տեսակ համարում ունենայ, ուրիշ մ՝ալ ուրիշ տեսակ։ Անշուշտ այսպիսի ժողով մը ճիւաղային պիտի նկատէք։—Պ. Փեշտիմալճեան հրապարակած է թէ՝ իր այս ընկերակիցներուն շատերը անբարոյական, խարդախ, շահախնդիր, ինքզինք ծախուած անձեր են։ Այդ ըսածները կամ ուսա են կամ իրաւ։ Եթէ ուսա են, պէտք է հրապարակաւ ետ առնէ, եթէ իրաւ, ուրեմն ինչպէս հնաոմուա կըլլայ այդպիսի արարածներու ընկեր ըլլալու պատիւն ձեռք բերել։ Ինչ ըսել և այն էֆէնդիներուն որք գրկարաց կընդունեն այն անձնաւորութիւնը որ իրենց համար հրապա-

Եթէ դիւանագիտական խումբը կը կարողանայ մի քանի ժամանակ տալ ներկայացումներ էժանագնացած գներով, ծախերով լօժաները 4 ր., բազկաթոռները 2 ր. և 1 ր. 50 կ., աթոռների մի մասը 1 ր., միւս մասը 70 կ., մնացածը 50 կ. և գալերէա 30 կ., մի որոշ ժամանակից յետոյ ժողովուրդը կընտելանայ թատրօնին և նա կարող է միշտ լիքը լինել։ Իսկ այդպիսի գներով ծախված բոլոր առմանների եկամուտը ոչ թէ միայն միջոց կը տայ խումբին դոյութիւն ունենալ և չարունակել գործը, այլ մինչև անգամ նա կը կարողանայ բարւոքել իր կազմակերպութիւնը, կազմել ընտիր բէպերտուար և այլն։ Բայց մինչև այդ ժամանակ խումբը պէտք է միջոց ունենայ, նիհէ ոչինչ վարձատրութիւն չը առնայ, գոնէ ծածկել ծախսերը և երբէք աչքի առաջ չունենալ թէ մի պէտք է տայ մնաւը, նիհէ եկամուտը չը ծածկէ ծախսերը։

Այս այսպէս լինելուց յետոյ այն բոլոր անձինք, որոնց համար նշանակութիւն ունի թատրօնը, պէտք է նպաստեն դիւանագիտական խմբին և օգնեն նրան իրանց կարողութեան չափ և ոչ թէ մնաւն նրան, մանաւանդ որ խումբը իր զոհողութիւնները կուսակցական ոգի չէ տալիս և չէ արդելում ոչքի թէ ասելի ընդարձակ չափերով առնել գործը և թէ միջամտել իր գործին և նրան ասելի լաւ ուղղութիւն տալ։

Ինչպէս լսել ենք, ներկայ թատրօնական սեզոնի ընթացքում, այսինքն երեք և կէս ամսւայ ընթացքում, դիւանագիտական խմբի մէջ ամենամեծ բաժին ստացող անդամը ստացել է հազիւ 35 րուբլի։ Արդեօք այս վայել է հայ հասարակութեան համար։ Արդեօք այս լրջութիւնը խմբանպատ չեղոյ, իրաւունք ունի մէկը նկատել, թէ այս բանը թոյլ էր, միաբ վատ։ Արդեօք կարող է մէկն ասել, թէ խումբը չհանապարհական նպատակներ ունի։

Հասկանալի է մաքառումն մի և նոյն գործին ծառայող և այդ գործը դանազան կերպ հասկացող կուսակցութիւնների մէջ, բայց երբ մի կարևոր գործ թողած է և գնում են մարդիկ,

---

պակ նկատից այն ամեն ածականները որք հայերէն լեզուի կատարի գազաններն կը տեղուին։ Ուրեմն իրաւ էին ար. փեշտիմալճեանի ըսածները, և այս էֆէնդիներն իրր մեղապարտ դատի կը ենթարկուենան։—Գարձեալ հոս ալ ինչ կրնանք ըսել։ Մեծ հարցեր են, պիտի պատասխանեն մեզ, քաղաքակրթութիւնը այսպէս կը պահանջէ։ Միայն սաչափը խմացանք որ Քաղաքական ժողովոյ անդամներէ Մատիկեանան էֆէնդի յայտարարեր է թէ՝ իր պատուոյ զգացումը չը ներէր անդամակցել ար. Փեշտիմալճեանի. և ուղեր է անպատճառ հրաժարիլ, սակայն ընկերակիցներն թախանձեր են որ մնայ, կարգադրութիւն մը կրնան։ Մեր յառջին նայելով կարգադրութիւնը սաչափս եղած է որ անդատարանի ընտրութիւնէ վերջ ար. Փեշտիմալճեի պիտի հրաժարի։ Աստուած սար սուտ չըլլար այս լուրը։—

Ասկէ ետքը կուզար կրօնական ժողովոյ ընտրութիւնն խնդիրը։ Ինչպէս պիտէք ներկայական համաղումար ժողովը պատրաստած էր 42 անձանց ցանկ մը որու մէջէն պիտի ընտրէր ժողովը 14 անդամներ կրօնական ժողովոյ համար։ Չեզ գրեցինք թէ ինչ պատճառներով ժողովը այդ ցանկը չընդունեց։ Կրօնական ժողովը չկանոց ինքզինքն արդարացնել։ Ասիկայ ալ բաւական գոհացում տալ էր։ Հոկտեմբ. 28-ին ներկայ երեսփոխաններէն ամենք առաջարկեցին որ այդ 42-ի ցանկը ընդունին ջնջելով մէջէն այն երեք անձերն, որք առաջնորդ են։ Այս առաջարկը շատ բանաւոր էր, ասոի չընդունուեցաւ։ Մի քանի երեսփոխանք կան, մեր փեօն-արմէնները, որք ինքզինքնին կը հաչակեն անման 89-ի Թոռներ։ Ասոնք իրենց կոչմանը արժանաւոր ըլլալու համար պէտք է անպատճառ կռուին եկեղեցական-

Fonds A.R.A.M

որոնք կամենում են ծառայել նրան, այդ մարդկերանց դէմ մաքառումն աւելի քան թէ անհատական էր։

Այս հարցին մենք դարձեալ կը վերադառնանք, եթէ «Մշակի» պ. խմբագիրը այնքան բարի կը լինի, որ չի փակի իր էջերը մեզ համար։

Թատրոնասէր

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

ՄՕՋԴՕԿԻՑ մեզ գրում են։ «Բարի նախանձը գրդեց մեր քաղաքը մի բարեգործական ընկերութիւն հաստատել։ Աւտրագրութիւնը սկսվել է արդէն և մեծ աչդողութեամբ չարունակվում է։ Արդէն առտրագրվեցան մօտ 130 հոգի անդամներ։ Նոյեմբերի 16-ին տեղիս տղայոց ուսումնարանի դահլիճում ժողովեցան անդամներ և միաձայն վճռեցին հաստատել բարեգործական մի ընկերութիւն։ Ժողովը ընտրեց իր միջից մի մանտ-ժողով 40 հոգուց բաղկացած, որ պէտք է քննէ Թիֆլիսի հայոց բարեգործական ընկերութեան ճիւղ լինելու կանոնագրութիւնը, եթէ պէտք կը լինի, մի քանի յօդուածների փոփոխութեամբ մեր քաղաքի պահանջների համաձայն։»

—

Թէ որքան յետադէմ, տգէտ և խաւար է դեռ ևս մեր գաւառացի հայ ժողովուրդը, ընթերցողը կարող է տեսնել հետևեալ օրինակից։ Մեզ գրում են Իգդիրից հետևեալը։ «Երևանեան թեմի դպրոցների վերատեսուչ պ. Պաւշանց այցելեց Նոր Բեյազետ Սուրմալուի գաւառի թէմերու գիւղը։ Հաւաքելով իր մօտ տանուտիրոջ հետ գիւղի հասարակութեան ամենանշանաւոր անձանց, թեմական վերատեսուչը առաջարկեց նրանց մտածել գիւղի մէջ ուսումնարան հիմնելու և նրա գոյութիւնը հաստատ կերպով ներկայէս ապահովելու մասին։ Բայց հաւաքականութեան միջից ամենանշանաւորները յանկարծ ասի կանգնելով սկսեցին գոռալ. «Մեզ համար ուսումնարան հարկաւոր չէ, ամ որ հարկաւոր է, Թող գնայ իր համար ուսումնարան կառուցանի։»

—

Կովկասեան բժշկական ընկերութիւնը, ինչպէս երևում է իր հրատարակվող արձանագրութիւնների վերջին տետրակից, վճռել է բժիշկ Բիաչեվսկու առաջարկութեան հիման վրա դրամական հանգանակութիւն հաւաքել յօգուտ Ս. Պետերբուրգի կանանց բժշկական կուրսերի։ Այդ հանգանակութեանը, բացի բժշկներից, կարող են մասնակցել և մասնաւոր անձինք։

—

«Соврем. Изв.» լրագիրը հաշւում է թէ ամենամարձ ժամանակում ինչքան դողութիւններ են կատարվել Ռուսաստանի թէ բանկերում, թէ այլ հիմնարկութիւնների մէջ։ Այդտեղ հաշւած են, ի միջի այլոց, Մելնիցկու և Սվիբլովի գողութիւնները, Րիկովի գողութիւնը, Խէրսոնի, Վլադիկավկասի, Կրօնշտատի, Ս. Պետերբուրգի բանկերի գողութիւնները, Ինանենդանական պաշտօնեաների և Սիմֆերօպոլի պետական գանձարանի գողութիւնները և այլն։ Հաշւից յայտնվում է որ ամենակարճ ժամանակում գողացվեցաւ 27 միլիոն րուբլի, չը հաշւելով մանր գողութիւններ։

—

«Тифл. Объявл.» լրագիրն հաղորդում են որ 20-ին նոյեմբերի անյայտ չարագործներ յարձակվելով փոթի-Թիֆլիսեան երկաթուղու գնացքի վրա Գօրիի և Կարելիի մէջ, վիրաւորեցին Բաքանօվ և Մամդին բանւորներին և խլեցին գնացքից 18,000 րուբլ։ Չարագործներն անհետացան, իսկ վիրաւորված բանւորներին հասցրին Միխայլօվօ կայարանը, բժշկական օգնութիւն տալու համար։

—

Մեզ խնդրում են տպել հետևեալը։ «Հայաստանց Բարեգործական ընկերութեան վարչութիւնը որոշել է առաջիկայ 1883 թվի սեպտեմբեր ամսից աննիսել հայ օրիորդներից մի որպիսութիւն Ս. Պետերբուրգում մանկավարժութիւն կամ բժշկութիւն ուսանելու համար։ Որպիսութիւն լինել ցանկացող անձն ասարտած պէտք է լինի իր ուսման դասընթացքը գիմնազիայում, նախապէս հայոց միջնակարգ ուսումնարանում ասարտելուց յետոյ։ Այսպիսով իրանց առաջարկութեամբ Թող բարեհաճեն դիմելու վարչութեանը, ներկայացնելով թէ դիմնազիայի և թէ հայոց միջնակարգ ուսումնարանի վարչութիւններից ստացած վկայագիրները։» Այս յայտարարութիւնը տպելով մեր կողմից չենք կարող մեր ուրախութիւնը չը յայտնել, որ մեր կանանց բարեգործական ընկերութիւնը վերջապէս մի որ և է գործ ուղում է կատարել, այդքան ժամանակ անգործ լինելուց յետոյ։ Ուրախ ենք, նոյնպէս որ մեր հասնետ կարծիքը, փոխանակ նոր դպրոցներ բանալու, նախ ձգտել բարձրագոյն ուսում տալ հայուհուն, հաստատութիւն և համակրութիւն է գտել մեր ընկերութեան անդամների մէջ։ Բայց կը համարձակվինք յիշեցնել մեր տիկիններին հետևեալը։ Ցայտնի է որ Ս. Պետերբուրգի բժշկական կուրսերում այլ ևս ուսանողուհիների նոր ընդունելութիւններ չեն լինի, ուրեմն աւելի լաւ է օժանդակել այնպիսի մի հայ օրիորդին, որ արդէն ընդունվել է Ս. Պետերբուրգի Բեստուժէվսկի իգական բարձրագոյն դպրոցում, որտեղից աչակերտուհիները գուցէ ժամանակով կընդունվին դարձեալ և բժշկական կուրսերը։ Որքան մեզ յայտնի է Ս. Պետերբուրգի այդ կուրսերում այս րոպէիս մի հայ օրիորդ կայ միայն, որ, որքան լսել ենք, կարօտ է օգնութեան։ Այդ օրիորդը և հայոց գպրոցում ասարտել է և վիճնազիայում էլ ասարտել է։ Փոխանակ մի նոր օրիորդ ուղարկելու, որ գուցէ իգական ուսման այժմեան անորոշ դրութեան ժամանակ չի էլ ընդունվի, աւելի լաւ չէ օժանդակել ուսանող մի հայ աղջկայ, որ արդէն մի քանի տարի չարչարվել է և ընդունվել է մայրաքաղաքի բարձրագոյն դպրոցում։

—

Կիրակի, 21-ին նոյեմբերի տեղի ունեցան Արծրունու թատրոնում Թիֆլիսի քաղաքային դումայի համար ձայնատուների ընտրութիւններ երրորդ բաժնի ընտրողներից։ Ընտրութիւնների հետևանքների մասին կը հաղորդենք մեր ընթերցողներին։

—

Կիրակի, 21-ին նոյեմբերի Ֆրանսիացի Բէդէ պէտք է բարձրանար Մուշտայիդի այգիից օդապարիկով։ Ժողովրդի մեծ բազմութիւն հաւաքվեց յիշեալ այգիում, վճարելով մուտքի փող։ Բայց օդապարիկով բարձրանալը չջողվեց պ. Բէդէին, որովհետև ահագին օդապարիկը չը կարողացան գազով լցնել։ Դադարիս պօլիցէյմէյստեր հրամայեց կասացնել յետ դարձնել փողերը տումակ ունեցողներին, որոնք գումարվել էին այդտեղ, օդապարիկի բարձրանալու տեսարանին հանդիսատես լինելու։

«ՄՇԱԿԻ» ՀԵՌԱԳԻՐՆԵՐ

ՀԻՒՍԻՍԱՑԻՆ ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹԵՆԻՑ

ՀՌՕՄ, 19 նոյեմբերի։ «Rassegna» լրագիրը ռուսաց արտաքին գործերի մինիստրի Հռոմ հասնելուց եղրակացնում է, որ բանակցութիւնները Ռուսաստանի, Աւստրիայի և Գերմանիայի մէջ։

ԿՕՊԵՆՀԱԳԵՆ, 19 նոյեմբերի։ Այստեղի նախկին գեսպան Մօլթնէէյմին շնորհված է Փղի շքանշանը, որ առհասարակ արվում է թագաւորական տան անդամներին։

ՓԱՐԻԶ, 19 նոյեմբերի։ Մինիստրների խորհուրդը վճռեց ուղարկել Մադագասկար մի նաւատորմ, որ պէտք է վերադառնայ Անգլիայից։

ԼՕՆԴՕՆ, 19 նոյեմբերի։ Էգուց Մանչեստերի գեսպանները կը ներկայանան արտաքին գործերի մինիստրին։

ՓԱՐԻԶ, 19 նոյեմբերի։ «Gaulois» լրագիրը հաղորդում է, որ Գամբէտտային վիրաւորից մի կին, որից նա մի որդի ունի, որ ապրում է Լայպցիգի մէջ։

Ս. ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, 19 նոյեմբերի։ Ճանապարհների հաղորդակցութեան մինիստրը մինիստրների խորհուրդին մի նախագիծ ներկայացրեց եկատերինբուրգից մինչև Տիւմէն երկաթուղի կառուցանելու մասին գանձարանի հաշւով։

ՕԴԷՍՍԱ, 19 նոյեմբերի։ Ներկայ նաւագնացութեան ժամանակ բերված են տպրանքներ 38½ միլիոնի, դուրս են արտահանված արտասահման ռուսաց տպրանքները 47 միլիոնի, որի մեջ 27 միլիոնի ցորեն։ Օդեսայի մի քանի առևտրականներ սակարկում են կամաւոր նաւատորմին գործը կալութիւն ընդունել ռուսաց տպրանքները Վլադիվաստոկի մէջ ծախելու համար։

ՄՕՍԿՎԱ, 19 նոյեմբերի։ „Современныя Извѣстія“ լրագրի խմբագրին թոյլ է տրված պատկերազարդ շաբաթաթերթ հրատարակել „Радуга“ վերնագրով։

ԱՍՏՐԱԽԱՆ, 19 նոյեմբերի։ Նաւագնացութեան դադարման ժամանակ ներքաղբված է գեղիժաններով ձմեռնատարհորդական կանոնաւոր հաղորդակցութիւն հաստատել Աստրախանի և Ցարիցինի մէջ։

Ս. ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, 19 նոյեմբերի։ Երկի հասան այստեղ արտասահմանից Ֆրանսիական, գերմանական և իտալական դեսպանները, վերջինը իր հրաժեշտի թղթերը ներկայացնելու համար։ Իտալական նոր գեսպանը դեռ չէ նշանակված։ Կրօնշտատի բանկի մէջ կատարված գեղծումների մասին դատաստանական գործը կը քննվի յունվարի վերջը Ս. Պետերբուրգի Նահանգական դատարանի մէջ։ Սինօդը կրոտված է որոշ վարձատրութիւն նշանակելով հոգևոր ծիսակատարութիւնների համար։ Լուր է տարածված, որ գիւղական կալուածական բանկի բացումը կը կայանայ 1883 թ. փետրվարի 1-ին։ „Бирж. Вѣд.“ լրագիրը հաղորդում է, որ կախանովի մանաժողովը մինչև նոր տարին երևի կը քննէ

Fonds A.R.A.M

այն բոլոր հարցերը, որոնք մտել են նրա նախագծի մեջ։

ՀՈՄՄ, 19 նոյեմբերի։ Սառատ-սեկրետար Գիրս երեկ այցելեց իտալական արտաքին գործերի մինիստր Մանչինիին։

ԿԱՑԻԼԻ, 19 նոյեմբերի։ Եգիպտական կառավարությունը համաձայն է Արաբի-փաշայի մեղադրական գործից հանել ապանութիւններին և հրկիզ գցելուն վերաբերեալ կէտերը։ Ենթադրված է ընդ միշտ աքսորել Արաբի-փաշային Եգիպտոսից։

ՍՕՖԻԱ, 19 նոյեմբերի։ Լրագրական լուրերը բոլգարական կառավարութեան և վանեկանի մէջ կատարվող բանակցութիւնների մասին Բոլգարիայի մէջ կաթոլիկ եպիսկոպոսութիւն հիմնելու վերաբերութեամբ ճիշդ չեն։

Ս. ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, 20 նոյեմբերի։ „Օրինքների ժողովածուի“ մէջ հրատարակված է կայսերական Մեծութեան ամբողջ ոտիզոսը և պետական մեծ գերբի նկարագրութիւնը։ Եգուց կը վերադառնայ Մեծ Իշխան Վլադիմիր Ալեքսանդրովիչ։

ԹԱՐԿՈՎ, 20 նոյեմբերի։ Կուբսկի, Պօլտավայի և Լօզովօի մէջ ձիւնի կոյտեր կան։ Գնացքները կանգնում են։

ՆԻԿՕԼԱԵՎ, 20 նոյեմբերի։ Ենթադրված է Խարկով-Նիկոլայեվսկի երկաթուղու տեղափոխական միջոցները ընդարձակել։

ԱՐԽԱՆԳԵԼՍԿ, 20 նոյեմբերի։ Գործարանական արդիւնաբերութիւնը նահանգի մէջ երկու տարվայ ընթացքում բնակա. 600,000 րուբլ գումար։

ՄՕՍԿՎԱ, 20 նոյեմբերի։ Նոյեմբերի 16-ին Պատասխանական պալատայի մէջ քննվեցաւ Մօսկվայի առևտրական բանկի մէջ վատնելու մասին դատաստանական գործը։

ՎԼԱՍԿ, 20 նոյեմբերի։ Ա.յստեղ եղանակը սուք է։ Նաւագնացութիւնը վերականգնվեցաւ։

ՐԻԱԶԱՆ, 20 նոյեմբերի։ Հասարակական բանկը դադարեցրից փոխառութիւնը արժէզրկերի գրաւականներով։

Կ. ՊՕԼԻՍ, 20 նոյեմբերի։ Բ. Դուռը համաձայնում է ռուսաց ընկերութեանը յանձնել երկաթուղու կառուցումն Բաթումից Դիարբեքիրի վրա մինչև Միջերկրական ծովը։ Առաջին միևնոյն նշանակված է Սեդ-Վեֆիկ, պետական խորհրդի նախագահ Դօրինֆի, պատերազմական միևնոյն Հուանի-փաշա։

ՀՈՄՄ, 20 նոյեմբերի։ Ա.յստեղի ռուսաց դեսպանութիւնը այսօր ձաշ է տալիս պաշտ. միևնոյն Գիրսի։

ՓԱՐԻԶ, 20 նոյեմբերի։ Հասարակական կարծիքը անհանդստացած է 1882 Թ. բիւդժեի 108 միլիոն գնիֆիցիի պատճառով։

ԲԵՐԼԻՆ, 20 նոյեմբերի։ Հեղեղին ենթարկված տեղերի համար առ այժմ նշանակված է հէս միլիոն մարկ։ Ա.յստեղ հասաւ աւստրիական թագաժառանգը։

Ս. ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, 20 նոյեմբերի։ „Прав. Вѣст.“ լրագիրը հաղորդում է, որ ուսանողական անկարգութիւնները կապանի և Ս. Պետերբուրգի համալսարանների մէջ արձագանք գտան Կիևի և Խարկովի համալսարանների և Խարկովի անասնաբուժական ինստիտուտի մէջ։ Նոյեմբերի 15-ին Ս. Պետերբուրգի և կազանի ուսանողներին համակրութիւն յայտնելու համար դադարված ուսանողների ժողովը ցրվեցաւ լսկիսօրի պահանջի համեմատ, բայց հոգաբարձուն սահմանած էր զօրքեր և պոլիցիա հրաւիրել։ Ուսանողները խոստացան այլ ևս ժողովներ չանել։ Դասախօսութիւնները շարունակվում են, մեծամասնութիւնը կարգապահութիւն է կամենում։ Խարկովի համալսարանի մէջ նոյնպէս հարկաւորվեցաւ պօլիցիայի և զօրքերի միջամտութիւնը, բայց այստեղ էլ ուսանողները խօսք տուին այլ ևս ժողովներ չանել։ Նոյեմբերի 16-ին Խարկովի անասնաբուժական ինստիտուտի մէջ ուսանողները վճռեցին շարունակել անկարգութիւնները մինչև բոլոր համալսարանների և ինստիտուտների փակելը։ Մի ուսանողի թաղման ժամանակ ահագին ամբոխի ներկայութեամբ վրդովող ճառեր արտասանվեցան։ Միևս օրը ուսանողները սպառնում էին տեսչին, եկան զօրքեր և պոլիցիա, որոնց ներկայութեամբ ժողովին մասնակցողները ցուցակագրված են։ Նոյեմբերի 18-ին ցուցակագրվածները նորից ժողով կազմեցին։ Պօլիցիայի չը հասնելու պատճառով նրանց անկարելի եղաւ կալանաւորել։ Համալսարանի և ինստիտուտի մէջ զօրախօսութիւններ չեն դադարել։

Ս. ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, 20 նոյեմբերի։ Առաջին ութ ամիսների ընթացքում ստացվել են մաքսահարկը 66,224,907 ր. 1881 Թուականից 13,535,067 ր. աւելի։ Новое „Время“ լրագիրը հաղորդում է, որ աշխարհաքաղաքական ընկերութիւնը յարաբերութիւններ է կապում գիտական միւս հիմնարկութիւնների հետ Սիբիրի մանրամասն նկարագրի պատճառով։ Տօմբօվօ-Սարատովի երկաթուղին յանձնված է գանձարանին։

ՄՕՍԿՎԱ, 21 նոյեմբերի։ Լէօնտօվսկուն յանձնված է ժողովրդական ոտնի նախագիծ կազմել թագապրութեան համար։ Ինժիներ Ֆարբիցիուս նախագծեց Կրեմլի և Մօսկվայի միւս պալատների լուսաւորութիւնը։ Դեկտեմբերին գատաստանական պալատան կը մեղադրվի Վլասոդայի և Վլադիմիրսկի երդվեալ դատաւորներին, որոնք մեղադրված են կաշառակերութեան մէջ։

ՏԱՇԿԵՆՏ, 21 նոյեմբերի։ Ա.յսօր առաւօտեան 11 ժամին երկրաշարժ կար։ Լսելի եղան սոսկալի ձայներ։ Հարուածներ։

ՄԱՐԻՈՒՊՕԼ, 21 նոյեմբերի։ Ա.յստեղ ցրտեր սկսվեցան։ Սամօրայի, Սիգրանի և Ատալանի մէջ ցուրտ է, վօլգայի վրա սառուց է լողում։

ԵԱԼՏԱ, 21 նոյեմբերի։ Դրիմի հարաւային ափի վրա տաք է։ Ծաղիկները ծաղկում են։

ԿԱԶԱՆ, 21 նոյեմբերի։ Զինուորական դատարանը բանտի վերակացուին ապանելու համար կախաղանի դատապարտեց Աօլօվկօվին։

ՓԱՐԻԶ, 21 նոյեմբերի։ Ֆրանսիական մամուլը վրդովված է, որ գերմանական պարլամենտը արդելից Ֆրանսերէն լեզուն էլզաս-Լոտարինգիայի նահանգական մասնաժողովի մէջ։

